

Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՐԵԳԻՐՔ 2018

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2018

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ.....	4
Վալերի Միրզոյան.....	4
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ – ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ	11
Անի Եղիազարյան.....	11
Վ. ԱՆԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.....	16
Նունե Մկրտչյան.....	16
ПЕРСПЕКТИВЫ ОБРАЗОВАНИЯ В СФЕРЕ МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В АРМЕНИИ: ПРОБЛЕМЫ И ДОСТИЖЕНИЯ.....	19
Эмине Рухкян.....	19
ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ (10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)	25
Ինեսա Գարդիշյան	25
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ.....	30
Անահիտ Հովնիկյան.....	30
ԱՇԱԿԵՐՏԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ «ԱՅԲԲԵՐԱՆԱՐԱՆ» ԵՎ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	34
Անահիտ Վարդանյան.....	34
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.....	40
ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ	40

Արմեն Ճուղուրյան.....	40
Նոննա Խաչատրյան	40
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	44
Ատոմ Մխիթարյան.....	44
ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ	53
Նարինե Սարգսյան	53
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	58
Սվետլանա Մուրադյան.....	58
ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	62
Արմեն Հակոբյան	62

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ Վալերի Միրզոյան

Հովհաննես Թումանյանի գրական ժառանգության ուսումնասիրությունը նորանոր շերտեր է բացահայտում, նորովի ենք ճանաչում հայ մեծագույն գրողի վիթխարի, հիբրավի տիտանական կերպարը: Թեպետ քաջատեղյակ ենք կյանքի էջերին, իսկ նրա բանաստեղծությունները, պոեմները, հեքիաթները, պատմվածքները դարձել են մեր հոգու և մտքի անբաժանելի ուղեկիցը, այդուհանդերձ, լավ չենք ճանաչում Հովհաննես Թումանյան երևույթը¹: Իսկ ճանաչել Հովհ. Թումանյանին՝ նշանակում է ճանաչել ինքներս մեզ, քանզի հանճարեղ լոռեցին հայ մարդու հավաքական կերպարն է, հայկականության անըստցուտ մարմնավորումը: Իհարկե, թումանյանագիտությունը շատ հարուստ է հրապարակումներով², բայց Հովհաննես Թումանյանի կյանքի և գործի մեջ շատ բան մնում է, իսկապես, անհասկանալի, ավելին՝ առեղծվածային: Ի լրումն՝ ժամանակները փոխվում են, ամեն սերունդ յուրովի է բացահայտում մեծն Թումանյանի իմաստությունը:

Արդ, անդրադառնալով Հովհաննես Թումանյանի ստեղծագործության աշխարհայացքային հիմքերին, նրա կյանքի և գրական աշխատանքի հավատո հանգանակին: Այստեղ մենք հայտնաբերում ենք երեք հիմք: Առաջինը խոսքի գործածության հարցում գրողի դիրքորոշումն է: Հայտնի է մեծ գրողի բացառիկ պահանջկոտությունը լեզվի հարցում, որ դրսևորվում է թե՛ սեփական գրվածքներում, թե՛ այլոց հրապարակումների հանդեպ նրա սկզբունքային վերաբերմունքի մեջ: Թևակոր խոսք է դարձել նրա այն միտքը, թե ամեն մի բառ մի ամբողջ աշխարհ է³: Որքա՞ն խստապահանջ է նա թարգմանությունների լեզվական մակարդակի հարցում, քանի՞ հրապարակախոսական հոդված ունի հայ թատրոնի բեմում հնչող խոսքի մասին՝ վերլուծական խորությամբ և ուսուցողական մեծ ներուժով: Եվ նկատենք, որ սա բնավ էլ սոսկ խոսքի գիտակի պարզ պահանջկոտություն չէ, միայն գրագիտության խնդիր չէ: Մա գրքի մարդու՝ գրողի երկարատև որոնումների հանրագումարն է, որի էությունը հանդիպում ենք սեղմ ու սպառիչ ձևակերպմամբ՝ 1917 թ. մի բանաստեղծության մեջ.

*Երկար, երկար ման եկա
Ոտքով, մըտքով ես կյանքում,
Երկու, երկու բան գրտա
Չար ու դժար էս կյանքում:*

*Վաղո՞ւց, վաղուց կար ասված,
Բայց կյանք տրվի ես բառին.
Դարձավ, դարձավ ինձ աստված՝
Գեղեցիկը ու բարին....⁴:*

¹ Մահվանից երկու ամիս առաջ մարգարեացած բանաստեղծն ասել է դստերը. «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու.... Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել... և ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք...» (Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 291):

² Փ. Վարդապարյան, Վշտի և թախծի երգիչ Հովհաննես Թումանյան, 1905, Ա. Տերտերյան, Հովհաննես Թումանյան: Հայրենի եզերքի քնարերգուն, 1911, Մ.Մ. Մկրտչյան, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1980, Ա. Բնձիկյան, Հովհաննես Թումանյան, Եր., 1969, Լ. Հախվերդյան, Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995, Է. Զրբաշյան, Թումանյանի բալլադները, Եր., 1969, Նույնի, Թումանյանի պոեմները, Եր., 1986, Ռ. Վարդանյան, Թումանյանի հեքիաթները, Եր., 1978, Ա.Մ. Վարդանյան, Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Եր., 1986, Ս.Ա. Մելքոնյան, Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Եր., 1986:

³ Հովհ. Թումանյան, Հայոց գրական լեզվի խնդիրը // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 289:

⁴ Հովհ. Թումանյան, «...Երկար, երկար ման եկա» // ԵԼԺ, հատ. առաջին, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1988, էջ 297:

Հիրավի, «գեղեցիկն ու բարին» Հովհաննես Թումանյան մարդու արժեքային համակարգի հիմքն են, մտավոր և հանրային գործունեության գլխավոր ուղեցույցը: Այս երկմիասնությունը առկա է ոչ միայն նրա ստեղծագործություններում, այլև նրա իսկ մեջ՝ որպես անհատականության. բոլոր ժամանակակիցներն անխտիր արձանագրում են թումանյանական մեղմ ու բարի ժպիտը, խոսքի և գործի ներդաշնակությունը, հաստատականության ու հանդուրժողականության համադրումը, սկզբունքայնությունն ու արդարամտությունը՝ թե՛ անձնական և ընտանեկան կյանքում, թե՛ ազգային և հասարակական մանր ու մեծ խնդիրների լուծման մեջ իր նպաստավոր մասնակցությամբ:

Մեծ մտածողի բովանդակ ստեղծագործությունը ճիշտ հասկանալու համար աշխարհայացքային այդ դիրքորոշմանը պետք է հավելել երկրորդ պահը՝ աշխարհաճանաչության նրա մեթոդը. դա իրականությունն ամբողջության մեջ ընկալելու, սակայն կենսական առանձին մանրամասնությունը ոչ միայն չանտեսելու, այլև հատկապես ամբողջության ներսում իմաստավորելու մոտեցումն է: Տպավորիչ համեմատության գործածությամբ՝ Հովհաննես Թումանյանը շատ պատկերավոր է մեզ ավանդել ճանաչողության համագիտական այդ մեթոդի կարևորությունը. «Գիտությունների մեջ պետք է խորանալ. խորանալ և միննույն ժամանակ բարձրանալ ու վերնից, բարձրից նայել՝ մանր հարցերով չտարվել՝ չկորչելու համար: Խիտ անտառ մտնողին անտառն անձայր ու անհուն կթվա, շատ մեծ, բայց եթե սարը բարձրանա, բարձրից կնկատի նրա սահմանը, չափը: Բարձրից պիտի նայել և միննույն ժամանակ խորանալ, աշխատել, ստեղծել»⁵: Ասվածը հատկապես ցայտուն է այն ծավալուն և մանրագին աշխատանքի համար, որ կատարել է Հովհ. Թումանյանը հայ ժողովրդի բանահյուսության հավաքման, ուսումնասիրության, մշակման ասպարեզում⁶: Ժամանակակից լեզվով՝ Թումանյան վերլուծաբանին հատուկ է համակարգային մոտեցումը, երբ դիտարկվում է ինչպես ամբողջական երևույթը, այնպես էլ դրա ամեն մի բաղադրիչի գործառույթները համակարգի ներսում: Եվ ուրեմն, հասկանալի է դառնում, որ հենց նա հիրավի իրավունք ուներ ասելու⁷.

Հոգիս՝ տանը հաստատվել՝

Տիեզերքն է ողջ պատել.

Տիեզերքի տերն եմ ես,

Ո՞վ է արդյոք նրկատել:

Վերջապես, երրորդ պահը՝ ստեղծագործ մարդու մշտանորոգ ձգտումը դեպի կատարելությունը, արածով չբավարարվելու տանջող զգացումը և արարելու անհագ ծարավը, որ ամբողջ կյանքում ուղեկցել է Հովհաննես Թումանյանին: Այս առումով խիստ պերճախոս են 1919 թ. նրա մտորումները. «Ի՞նչ եմ գրել մինչև հիմա. մի քանի տող բան, էն էլ ձեռագ, ոտի վրա կամ հիվանդ ժամանակս.... Մարդ ձգտում պիտի ունենա լավանալու, բարձրանալու: Միշտ պիտի ձգտել դեպի կատարյալը»⁸: Նամակներում էլ է կրկնվում, թե «զարգանալու խնդիր ունեմ առաջս դրած»⁹: Մշտապես բարձրանալու, դեպի կատարելությունը մղվելու գաղափարին հանդիպում ենք նաև գրողի բազում ստեղծագործություններում: Եվ նրա համար սա ոչ թե լոկ անձնական, այլ նաև համազգային ուխտ է¹⁰.

....Բայց գրնում ենք մենք անվեհեր

Զարկերի տակ չար բախտի,

Մեր աչքերը միշտ դեպի վեր՝

Դեպի լույսը մեր ուխտի:

⁵ Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 175:

⁶ Այդ հանգամանքն արձանագրել են թումանյանագետները. «Ուսումնասիրելով Հովհ. Թումանյանի ստեղծագործական ձեռագրերը՝ տեսնում ենք, որ ժողովրդական հեքիաթների մշակման վրա աշխատելիս նա դրսևորել է իրեն ոչ միայն որպես տաղանդավոր գրող, այլև որպես պրպտող մտքի տեր գիտնական-բանասեր» (Ա.Մ. Վարդանյան, Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1986, էջ 28):

⁷ Հովհ. Թումանյան, Քառյակներ // ԵԼԺ, հատ. երկրորդ, Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1991, էջ 24:

⁸ Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 182, 205:

⁹ Հովհ. Թումանյան, Նամակներ // ԵԼԺ, հատ. իններորդ, Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1997, էջ 185:

¹⁰ Հովհ. Թումանյան, Մեր ուխտը // ԵԼԺ, հատ. առաջին, Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1988, էջ 201:

Միևնույն պաթոսն առկա է նաև Հովհաննես Թումանյանի շատ հեքիաթներում: Ահավասիկ, «Ոսկի քաղաքի» թագուհին, երբ համոզվում է, թե ինչպես Դիվանան, նախկինում «կյանքից ձանձրացած», դատարկապորտ այդ երիտասարդը վերափոխվել է, վերածվել բոլորովին նոր՝ իդեալներ և ձգտումներ ունեցող, մարդու, նրան դրվատանքի խոսք է ուղղում. «Միշտ լավ է, երբ մարդիկ թողնում են իրենց վատ սովորություններն ու կրքերը, լցվում են բարձր կարոտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի: Թե կհասնեն, լավ, թե չեն հասնի, դարձյալ միշտ լավ է ու լավ, որովհետև կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ ձգտումն ու ճանապարհ»¹¹:

Եվ ահա Հովհաննես Թումանյանի տիտանական կերպարի այս երեք բաղադրիչները՝ «գեղեցիկը ու բարին» պաշտամունքը, վերլուծության և համադրման միասնության իմացական մեթոդը և հարատև արարման, ինքնավեհացման անկասելի ձգտումը, իրենց ներքին ներդաշնակությամբ, ուղղորդել են նրան թե՛ առտնին գործերում, թե՛ հանրային գործունեության մեջ և թե՛ մտաբանական և հոգևոր վիթխարի կառույցը՝ թումանյանական ուրույն աշխարհն արարելիս: Որպես մտածող, և հենց միայն այդ պատճառով՝ տառապող մարդ, Թումանյանը խորհում է մարդու կյանքի իմաստի, աշխարհի սկզբի, բնության և Աստծո, մարդկային հասարակության, հայ ժողովրդի և հայ գրողի վիճակի մասին, փորձում է իր պատկերացրած և քարոզած «գեղեցիկը ու բարին» մարմնավորել իրական կյանքում: Այս առումով տեղին է նկատել թումանյանագիտության երախտավոր ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը, որ «Թումանյանի ստեղծագործության մեջ միշտ առկա է մարդկային գոյության իմաստն ու խորհուրդը՝ զննելու, մարդու կոչման և նպատակների մեջ թափանցելու ձգտումը. դա հատուկ է ինչպես իրեն՝ բանաստեղծին, այնպես էլ նրա հերոսներից շատերին»¹²: Գեղեցիկը ու բարին, նաև՝ ճշմարիտն ու արդարն են ճառագում նրա բանաստեղծություններն ու պոեմները, բալլադներն ու հեքիաթները, հրապարակախոսական և քննադատական հոդվածները, անգամ կարծեք անձնական բնույթի նամակագրությունը, վերջապես նրա ապրելակերպն ու հանրային-ազգային գործունեությունը:

Ստեղծագործության և ստեղծագործողի հանդեպ Հովհաննես Թումանյանի վերաբերմունքի ձևակերպումների հանդիպում ենք ինչպես իր հրապարակախոսական հրապարակումներում և նամակներում, այնպես էլ նրա մասին ժամանակակիցների հուշերում: Ստեղծագործությունը նորի արարումն է, ստեղծագործողի ազատ գործունեության արգասիքը, ինչը պահանջում է համապատասխան ունակություններ, օժտվածություն, ճաշակ: Միայն հեղինակելու ցանկությունն անբավարար է: Ավելին, ակնհայտորեն ապաշնորհ մարդուն աջակցելը գուր է: Շատ պատկերավոր է Հովհ. Թումանյանի այն միտքը, որ մեզ է փոխանցում Ավետիք Բասիակյանը. «Բզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել՝ գրող դառնալու համար: Իր եղջյուրները պախրան ինքը պիտի շինե»¹³: Նույն մտքին հանդիպում ենք Թումանյանի վերջին տարիների գրառումներում՝ այս անգամ աստվածաշնչյան մարգարեի ոճով ձևակերպված. «Նայեցի մարդուն իր ծննդյան օրից մինչև մահը – ամեն դիրքի վրա, նա է միայն բարձրը, որ կանգնած է իր ոտքերի վրա, նա է միայն գեղեցիկ, որ լուսավորված է իր սեփական լույսով, իր ներքին լույսով լուսավորվում է իրենից»¹⁴:

Միևնույն ժամանակ, շիտակ ստեղծագործողը գիտե իր արածի արժեքը, նա է, ամենքից առաջ, սեփական ստեղծագործության հիմնական գնահատողն ու անողոք քննադատը, ուստի և ոչ մի արդարացի կամ անարդարացի քննադատություն չի կարող սասանել նրա դիրքորոշումը: Դարձյալ Ավետիք Բասիակյանի փոխանցմամբ ծանոթանում ենք Հովհաննես Թումանյանի կարծիքին. «Ո՛չ մի քննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել»¹⁵: Վերստին՝ դժվար չէ տեսնել, որ սա ոչ թե անհատի ինքնահավանություն է, այլ խորը համոզմունք՝ ածանցյալ Հովհ. Թումանյանի հավատո հանգանակին բնորոշ եռմիասնությունից՝ արարել գեղեցիկն ու բարին, մշտապես ձգտել կատարելության և սեփական արգասիքը գնահատել իր իսկ արարման ամբողջական դաշտում:

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությանն առնչվողը զգում է ամենից առաջ նրա շարադրանքի հանճարեղ պարզությունը¹⁶:

¹¹ **Հովհ. Թումանյան**, Ոսկի քաղաքը // ԵԼԺ, հատ. հինգերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1994, էջ 258:

¹² **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի ռեալիզմը // Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հատ. 3, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 22:

¹³ **Ավ. Բասիակյան**, Հովհաննես Թումանյանը // Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 2009, էջ 12:

¹⁴ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հատ. ութերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1999, էջ 453:

¹⁵ Ավ. Բասիակյան, Հովհաննես Թումանյանը, էջ 12:

¹⁶ **Հովհ. Թումանյան**, Աղբյուր // ԵԼԺ, հատ. առաջին, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 131:

Մարի լանջին, ժայռի տակ,
Ջուր էր բըխում սառնորակ
Ու ցրվելով խոտերում
Բզուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ
Շինեց հովիվն ու անուշ
Խաղ ասելով նա տարավ
Ջրեց հոտը իր ծարավ:

Պախրեն անցավ էն սարից՝
Շոգից հանած չոր լեզուն.
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,
Ապա նայեց աստծուն:

Անցվորն եկավ տոթակեզ,
Սառն աղբյուրին որ հասավ,
Գըլխարկն առավ ու չոքեց՝
Խմեց, սիրտը հովացավ:

Ու տվավ իր օրհնանքը
Անցվոր մարդը էն քարի.
«Քո շինողի օր-կյանքը
Ջրի նման երկարի՝...»

Ո՞րն է այս չքնաղ բանաստեղծության խորհուրդը, ինչո՞ւ է մեզ առհասարակ այդքան հուզում և ոգևորում Թումանյանի ամեն մի տողը, թափանցում մեր հոգու խորքը, կողմնորոշում դեպի «գեղեցիկն ու քարին»: Հովիվի քայլը պարզ է ու բնական, այդքան էլ պարզ ու ինքնաբերական է նրա քարի գործի համար անցորդի օրհնանքը: Պատկերը զերծ է ոճական հնարքներից, ասելիքի խորհուրդը հստակ է, հորդորը՝ մեղմ:

Համեմատենք քառյակներից մեկի, թերևս, ոճականորեն առավել հազեցվածի հետ¹⁷.

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ,
Մեծ խոհերի խոյանքների հեռուններում անարատ,
Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըրբադոտ՝
Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ...

Բանաստեղծի ասելիքը՝ Աստծուն հաղորդակցվելու հնարավորության ներքին ըմբռնումը նրբահնար մակդիրների այսօրինակ կուտակմամբ, որքան էլ առերևույթ զարմանալի է թվում, նույնքան հասկանալի է ընթերցողի համար, որքան նախորդ բանաստեղծության անպաճույճ շարադրանքը: Հայ մեծ մտածողի, փիլիսոփայի, բարոյագետի հզոր ազդեցության այդ գաղտնիքը լավ է բացահայտել մեկ այլ թումանյանագետ, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը. «Եվ նրա հանճարը չի ճնշում մարդուն, նրա իմաստուն մտքի մերձեցումը չի նեղում, չի նսեմացնում իր մեծությամբ, որովհետև նա չի պարտադրում ու կարգադրում, չի քարոզում ու համոզում, այլ ներշնչում է: Իր ստեղծագործության ոչ մի էջում Թումանյանը բարոյախոս չէ, բայց և նրա ամեն մի էջն ունի իր բարոյական խորհուրդը, իր խրատը: Խրատ՝ առանց

¹⁷ Հովհ. Թումանյան, Քառյակներ, էջ 53:

խրատաբանության, բարոյականություն՝ առանց բարոյախոսության, նպատակ՝ առանց նպատակաբանության»¹⁸:

Հովհաննես Թումանյանի կառուցարկած պատկերների հմայքի մյուս գաղտնիքն այն է, որ նրան միշտ հաջողվում է ապահովել «գեղեցիկի» ու «բարու» ներքին ներդաշնակությունը, այլ կերպ ասած՝ սեփական արժեքային համոզվածությունը պարզ ու մատչելի, տպավորիչ ու համոզիչ մատուցել ընթերցողին: Նրա բոլոր գործերում «գեղեցիկը» բարի է, «բարին»՝ գեղեցիկ: Իսկ որտե՞ղ պիտի որոնե՞ր և գտնե՞ր իր ուզածը ամբողջովին հայկականությամբ տոգորված հայ մտածողը, եթե ոչ ամենից առաջ հայ ժողովրդի ծովածավալ բանահյուսության մեջ: Հենց իր՝ Հովհաննես Թումանյանի հավատամքն է և նաև պատգամը հայ գրողներին՝ հենվելու սեփական ժողովրդի ստեղծածի վրա, սնվելու անանուն հայ մարդկանց դարերով կուտակված իմաստությունից. «Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհի արջն»¹⁹: Հովհ. Թումանյան ստեղծագործողի այս դիրքորոշումը և նաև վիթխարի վաստակը բանահյուսության արդիականացման մեջ շատ սեղմ ու սպառիչ բնութագրել է ակադեմիկոս Արամ Ղանալանյանը. «Համամիտ ու համազգաց իր հարազատ ժողովրդին, հիմնալի ճանաչելով վերջինիս ազգային բնավորության առանձնահատկությունները, Թումանյանը իրեն հատուկ հմտությամբ ներթափանցեց նրա բանավոր ստեղծագործության բազմախորհուրդ գաղտնաբանները, լույս աշխարհի հանեց այնտեղից հայ ժողովրդի մտայնությունը, աշխարհայացքն ու կենսափորձն առավել լավ դրսևորող բանահյուսական հուշարձանները և իր արարչական վրձինով նոր գույն ու երանգ տալով այդ հուշարձաններին, նորից վերադարձրեց իրենց իսկական տիրոջը»²⁰:

Բայց և որքա՛ն հարգանքով ու հմտությամբ է Հովհաննես Թումանյանը գործադրում, մասնավորապես հայոց առածներն ու ասացվածքները: Այլ կերպ հնարավոր չէ. դրանք ժողովուրդներն են ստեղծում, որ «հազար-հազար աչքերով, հազար-հազար ականջներով, հազար-հազար խելքերով երկար տարիների ընթացքում նայում, լսում, քննում ու դատում են կյանքը ու վերջը հանում են մի կարճ եզրակացություն...»²¹: Առածանին, ավանդությունները, հեքիաթները, շեշտում է Հովհ. Թումանյանը, հայ ժողովրդի հավաքական խոսքն է, «պապական խոսքը», ամբարված այն իմաստությունը, որ կարիք ունի ունկնդրի, խոսք հասկացող ամեն հայ մարդու, ուստի և «... ցանկանում ենք սրտագին, որ «ասողին ճշմարիտ լսող լինի»: Ժողովուրդը շատ նյութ ունի տալու ամեն մեկին»²²: Ուշադրություն դարձնենք «ճշմարիտ լսող» բնութագրմանը. սա Հովհ. Թումանյանի առաջին գրավոր խոսքն է (տպագրվել է անստորագիր 1887 թ. «Նոր-Դար» օրաթերթում) և փաստորեն նրա յուրատեսակ ուխտն է՝ լինել ժողովրդի իմաստուն խոսքը «ճշմարիտ լսողներից» մեկը: Եվ ինչպես այլ հարցերում, այս հարցում ևս Թումանյան անհատը հավատարիմ է եղել իր խոստմանը: Մեկ օրինակ ևս Հովհ. Թումանյանի առածանուց: 1913 թ. իր խմբագրած «Հորիզոն» օրաթերթի մի առաջնորդողի մեջ խոսում է հայոց գրերի գյուտի 1500-ամյակի՝ համազգային մեծ տոնը նշելու միջոցառումների և դրանցում ամեն մեկի մասնակցության մասին. «Փույթ չի, թե փոքր կլինի մեզանից շատ շատերի տվածը: Մեր ժողովուրդը մի շատ իմաստուն առած ունի, որ ասում է. «Շատը ուժից, քիչը սրտից»: Քիչը տալով ամեն մարդ իր սիրտը բերած կլինի մեջտեղ, և միայն սրտով է, որ գեղեցիկ ու մեծ գործեր են կատարվում»²³: Ահա այսպես, ասելիքն ազուցելով ժողովրդի այս կամ այն սեղմ խոսքին, Հովհ. Թումանյանն ուժեղացնում է իր խոսքի պատկերավորությունը, նաև փաստորեն մեզ հիշեցնում մեր նախնիների իմաստուն ասույթները, այսինքն՝ մեզ էլ է հորդորում լինել «ճշմարիտ լսող»: Այն էլ ասենք, որ խոսքի մեծավարպետը ոչ միայն բանահյուսական գոհարները, իսկապես, նոր գույնով ու երանգով «վերադարձրել» է տիրոջը, այլև դա արել է հավելումով՝ հարստացրել հայոց բառն ու բանը: Նրա բանաստեղծություններից, պատմվածքներից և հեքիաթներից շատ ասույթներ և դարձվածքներ այնպես են մերվել հայոց խոսքին ու մտքին, որ կարծեք միշտ էլ եղել են. «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրե՛ք», «Գործն է անմահ, լա՛վ իմացե՛ք», «Պըսակեցին Մարոյին, / Տըվին չոբան Կարոյին», «Էլ հին ու նո՛ր, էլ հերն ու մե՛ր», «Ո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս, / Դե, զարկելը դու հիմի

¹⁸ Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր.: Հայաստան, 1966, էջ 40:

¹⁹ Հովհ. Թումանյան, Հայկական էպոսի բառարանից // ԵԼԺ, հատ. ութերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1999, էջ 254:

²⁰ Ա. Ղանալանյան, Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը // Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հատ. 1, Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 45:

²¹ Հովհ. Թումանյան, Կեղտոտ մամուլ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1994, էջ 208:

²² Հովհ. Թումանյան, Մի ավանդություն // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1994, էջ 7:

²³ Հովհ. Թումանյան, Մեր համազգային հորեյանը և դպրոցն ու գրականությունը // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1995, էջ 95:

տես...», «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ», «Նեսոյի քարաբաղնիս», «Գաբո բիձու շերամապահությունը», «Չախորդ Փանոս», «Քաջ Նազարի բախտ», «Կիկոսի մահը», «Անխելը մարդը» և այլն:

Թումանյանական «գեղեցիկն ու բարին» հանրային բացառիկ արժեք ունեն, ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստ: Եվ այս կարևոր հանգամանքը Հովհաննես Թումանյանը հատուկ ընդգծել է հայ պատանի գրասերների երեկոյթում (Թիֆլիսում, 1913 թ. մարտի 13-ին). «Ես շատ էլ համաձայն չեմ, թե գրականությունը կյանքի հայելին է միայն... նա միաժամանակ և ազդակ է կյանքի մեջ... Այո՛, գրականությունը հայելի չէ լույս. և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»²⁴:

Հովհաննես Թումանյանի սեփական կյանքն ու գործը լավագույն ապացույցն են, թե հանրային կյանքի համար ի՛նչ հզոր ազդակ կարող է լինել թե՛ գրականությունը, թե՛ գրականության անխոնջ մշակը: Հովհ. Թումանյանը մշտապես «գեղեցիկի ու բարու» կողքն է՝ որպես հանիրավի տուժածների պաշտպան, կարիքավորների հովանավոր, ազգամիջյան կործանարար բախումների ժամանակ՝ սպիտակ դրոշմ ձեռքին խաղաղարար: Բացառիկ ուշադրություն է հատկացրել խոսքի հանրային գործառնությանը, մամուլի լեզվին, հատկապես մտավորականների շրջանում տարատեսակ քննարկումների և բանավեճերի ժամանակ մասնակիցների վարվելակերպին, մշտապես հորդորել է փոխադարձ հարգանք և հանդուրժողականություն դրսևորել, իր իսկ վարքով օրինակ է ծառայել գեղեցիկ ու բարի, ճշմարիտ ու արդարացի խոսքի: Այստեղ ևս Հովհ. Թումանյանը տերն է իր հավատամքի. «Ամենայն հարգանքով լսել եմ ամենքին, որ խոսել են և լսելու եմ նրանց էլ, որ դեռ պետք է խոսեն»²⁵: Բայց և նույն բանը ցանկալի է բոլորի համար, ուստի և նա կարևորագույն մի պայման է ձևակերպում. «Լավ վիճաբանողները պետք է սովորեցնեն հասարակությանը, թե ինչ կնշանակի մի բան հասկանալ, ինչպես պետք է հասկանալ, ինչպես պետք է կարծիք հայտնել և ինչպես վերաբերվել հակառակորդին... Դա կլինի դպրոց»²⁶: Առհասարակ, խոսքային հաղորդակցման պատշաճ կազմակերպման և անցկացման սկզբունքների մասին Հովհ. Թումանյանի դատողություններն այնքան տարողունակ են և համակարգված, որ ամենայն հիմքում նրան կարող ենք համարել մեզանում վիճարկեստի (երիտսիկայի) հիմնադիրը²⁷:

Ինչպես անհատը, այնպես էլ հասարակությունը մշտապես պիտի ձգտի կատարելության, տեսնի և ժամանակին իրականացնի հասունացած բարեփոխումները: Բայց դա ինքնաբերաբար չի կարող լինել. հասարակության ոչ բոլոր անդամներն ունեն հնարավորություն լավագույն գաղափարներն իսկ կյանքի կոչելու: Տնտեսության, կրթության, մշակույթի, հանրային կյանքի օրախնդիր փոփոխությունների խոչընդոտներից հիմնականը Թումանյան հրապարակախոսն անվանել է «վարչական անկարգության վնասակարություն»: Կառավարաբանության լեզվով՝ սա «ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» հինավուրց, բայց անբեկանելի սկզբունքի խախտումն է. «Ընդհանրապես նա, որ գաղափարներ է քարոզում ու ծրագրիներ է մշակում, ոչ գործ ունի ձեռքին, ոչ գործելու իրավունք, իսկ նա, որ գործելու պաշտոն և մտքեր իրագործելու կարողություն ունի, չի ըմբռնում այն գաղափարները, որ կյանքի հառաջադիմությունն են պայմանավորում, չի ընդունում այն ծրագրերը, որ բարեկեցություն են պահանջում: Գործերի վրա նա իր առանձին հասկացողությունն ու հայացքն ունի, որ առաջնորդում և արդարացնում են իրան»²⁸: Որքա՞ն ծանոթ իրավիճակ է, որքա՞ն կրկնվող և... անհաղթահարելի, քանի որ, ինչպես Թումանյանն է հավելում, «կյանքի բնական ընթացքն է այդ»²⁹:

Թումանյանական հավատո հանգանակի երեք սյուները՝ խոսքի «գեղեցիկ ու բարի» գործածությունը, ընդհանուրի և մասնավորի հարաբերակցության ճիշտ ընկալումը, կատարելության մշտական ձգտումը արտահայտվել են նաև «գրող – հասարակություն» բազմաբարդ փոխհարաբերությունների քննարկման և մեկնաբանման ընթացքում: Բնական է, որ ամեն մի գրող ցանկանում է գնահատված լինել, հանրային ճանաչում և հեղինակություն վայելել, և նույնքան բնական է ու հասկանալի, որ այդ նույն գրողը նաև

²⁴ **Հովհ. Թումանյան**, <Խոսք պատանի գրասերներին> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 32:

²⁵ **Հովհ. Թումանյան**, Անտեղի ու անպետք միջոց // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 26:

²⁶ **Հովհ. Թումանյան**, Հայոց գրողների ընկերության գրական երեկոները // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 23:

²⁷ **Վ. Միրզոյան**, Հանդուրժող խոսք, Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2017:

²⁸ **Հովհ. Թումանյան**, Արգելքներ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1994, էջ 50:

²⁹ Անդ:

կարիք ունի հանրային աջակցության, ստեղծագործելու բարվոք պայմանների, նաև՝ արդարամիտ գնահատողների որոշակի միջավայրի: Կողմերի փոխադարձ աջակցության և փոխադարձ պահանջկոտության վերաբերյալ Հովհաննես Թումանյանը ձևակերպած և դույզն-ինչ արդիականությունը չկորցրած ճշմարտություններից մի քանիսն այստեղ ամփոփ շարադրենք: Նախ՝ «Եթե գրականությունը ազգի հոգին է և գրողները էդ հոգու ծնունդներն են ու արտահայտիչները»³⁰, ապա հանրությունը համապատասխան վերաբերմունք պիտի ունենա, հասկանա գրողների նյութական անապահով վիճակը, նրանց չնայի «դուքանչիների աչքով», ըմբռնի վերջապես, որ գրող մարդը «կյանքի բոլոր հոգսերի, ընտանեկան բոլոր պահանջների, անձնական բոլոր կարիքների դեմ միայն մի բան ունի – յուր ձիրքը, յուր տաղանդը»³¹: Երկրորդ՝ անհանդուրժելի է այն վիճակը, երբ հանուն վաստակի գրողը էժանագին արտադրանք է տալիս, հարմարվում գերիշխող ցածր ճաշակին. «Գրողը հարմարվում է ամբոխի ճաշակին, անում այն, ինչ որ չպետք է անի, այն է տալիս, ինչ որ դուրս է գնում շուկայում»³²: Երրորդ՝ գրողին հարկավոր է աջակցել, գնահատել, դրվատել, գորակցել նրա կենդանության օրոք, իսկ մահվանից հետո մեծարանքը, մանավանդ ուշացած և ուռճացած, այլ բան չէ, քան գրողին դարձնել «նվաստացումի, բամբասանքի ու անարգանքի առարկա», ուստի և՛ Թումանյանի զուսպ գայրույթը. «Հայ գրողի մահից հետո էլ մեզ հիշողություններ չեն հարկավոր. մոռացության տվեք նրան, ինչպես մոռացություն էիք տալիս մի ժամանակ»³³: Չորրորդ՝ թե՛ գրողի, թե՛ գրողական հանրության համար անպատվաբեր երևույթ է, երբ անտաղանդ մեկին են ումանք հետմահու փառաբանում, կուսակցական-թայֆայական հիմքով մոգոնում չեղած բարեմասնություններ. Թումանյանը չի խնայում այդ գրչակներին՝ «խաժամուժ, խուժան, որ իր լավ թե՛ վատ ցույցերով երբեք լուրջ գնահատող չի և միայն կարող է շփոթել ու շփլացնել»³⁴: Հինգերորդ՝ «գրականությունը զարգացնելու ուժեղ միջոցներից մինը անողոք ու անաչառ քննադատությունն է»³⁵: Վեցերորդ՝ ինքնին հայ ծնվելն ու հայերեն գրելը դեռ անբավարար են. գրողը պիտի ապրի հայ ժողովրդի մեջ, զգա հայ մարդկանց ուրախությունն ու տխրությունը. միայն հայոց հողն ու ջուրը, հայ մարդու հոգին ու շունչը կարող են գրողին, Թումանյանի բնութագրմամբ, «ձեռնադրել հայոց բանաստեղծ», այլապես նա կմնա «հայ բանաստեղծ, ոչ թե հայոց բանաստեղծ»³⁶: Եվ, վերջապես (սույն հոդվածի շրջանակներում միայն)՝ «Գրականության համար պետք է ունենալ ճաշակով, հասկացող, գեղարվեստի պահանջը դնող ու գրական գործը գնահատող հասարակություն»³⁷: Այսինքն՝ հայ գրականությունից և հայ գրողներից տեղի-անտեղի դժգոհող և սոսկ օտար հեղինակների գրվածքները անքննադատ փառաբանող (ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ այժմ) քաղքենի հանրությունն ինքը պիտի ունակ լինի սեփական ճաշակը բարձրացնելու, դառնալու բարձրարվեստ գրականության թե՛ պատվիրատուն, թե՛ սպառողն ու գնահատողը: «Գեղեցիկ ու բարին» երկկողմանի երթևեկության են նման, ոչ թե խուլերի գրույցի:

Հովհաննես Թումանյանի բազմաբնույթ և խորախորհուրդ պատգամները, իհարկե, այսքանով չեն սպառվում, ինչպես որ անսպառելի է հայ մեծ մտածողի ձեռակերտ տիեզերքը: Բայց ավելի կարևոր է այն, որ ամեն անգամ Թումանյան կարդալիս, առավել ևս խորամուխ ուսումնասիրելիս, մենք նոր բացահայտումներ ենք անում, ինքներս մեզ ավելի լավ ենք ճանաչում: Թումանյանի պես իմաստուն միջնորդի օգնությամբ վերստին հայտնաբերում ենք հայոց աստվածային լեզվի գեղեցկությունը, Թումանյանի շնորհիվ և Թումանյան հնչեցնելով երախտագիտությամբ զգում ենք հայոց խոսքի բարերար ազդեցությունը մեր հոգու և մտքի վրա: Թումանյանի պես զանձաբան ունենալով՝ օրինավոր հպարտություն ենք ապրում հայ ծնվելու և հայախոս լինելու համար: Թումանյանի պես կենսական ուղեկից ունենալով մենք անսասան հավատով ենք տոգորվում մեր քաղաքի անվախճան երթի, հայոց լեռների և հայ ազգի հարատևության հանդեպ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

³⁰ Հովհ. Թումանյան, <Խոսք պատանի գրասերներին> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 31:

³¹ Հովհ. Թումանյան, Նամակներ // ԵԼԺ, հատ. իններորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1997, էջ 183:

³² Հովհ. Թումանյան, Թյուրիմացության պատճառով // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1994, էջ 153:

³³ Հովհ. Թումանյան, Մահից հետո // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 34:

³⁴ Հովհ. Թումանյան, Նամակներ // ԵԼԺ, հատ. տասներորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1999, էջ 191:

³⁵ Հովհ. Թումանյան, Անտեղի ու անպետք միջոց, էջ 27:

³⁶ Հովհ. Թումանյան, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները // ԵԼԺ, հատ. ութերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1999, էջ 85:

³⁷ Հովհ. Թումանյան, Թյուրիմացության պատճառով, 1994, էջ 153:

Հոգիվածում հանգամանորեն քննարկվում են Հովհաննես Թումանյանի հավատո հանգանակի երեք բաղադրիչները: Առաջինը «գեղեցիկի» և «բարու» երկմիասնությունն է, որն արտահայտվում է ինչպես նրա ստեղծագործության, այնպես էլ հանրային գործունեության մեջ: Երկրորդը Թումանյանին բնորոշ իմացական մեթոդն է՝ ամբողջականության և առանձին երևույթի դիտարկումը իրենց ներքին պայմանավորվածության մեջ: Երրորդը գրողի անկասելի ձգտումն է դեպի մշտական կատարելագործումը: Թումանյանի բովանդակ ստեղծագործությունը ազգային ինքնաճանաչման բացառիկ գանձարանն է, հայ ժողովրդի անհաղթ ոգու հաստատումը, հայության հարատևության երաշխավորը:

Հիմնաբառեր. Հովհաննես Թումանյան, հավատո հանգանակ, «գեղեցիկը ու բարին», կատարելության ձգտում, բանահյուսություն, գրող և հասարակություն:

HOVHANNES TUMANYAN'S CREDO

Valeri Mirzoyan

The article reveals the life credo of the great Armenian writer Hovhannes Tumanyan. The author highlights the three main components of his credo. The first is the imperative unity of the “beautiful and good,” which is expressed both in his work and in his social activities. The second is a systematic approach in the perception and analysis of real-life phenomena. The third is a continuous pursuit of excellence.

Verses, poems, short stories, parables, fairy tales, publicism of Tumanyan is the triumph of the Armenian language, evidence of the invincible spirit of the Armenian people, unique treasure trove for national self-discovery.

Keywords: Hovhannes Tumanyan, credo, “beautiful and good”, striving for perfection, folk art, writer and society.

КРЕДО ОВАНЕСА ТУМАНЯНА

Валерий Мирзоян

В статье раскрывается жизненное кредо великого армянского писателя Ованеса Туманяна. Выделены три основные составляющие его кредо: первое – императивное единство начал “прекрасного и доброго”, что выражено как в его творчестве, так и в общественной деятельности, второе – системный подход при восприятии и анализе явлений реальной жизни, третье – непрестанное стремление к совершенству. Стихи, поэмы, рассказы, притчи, сказки, публицистика Туманяна – это торжество армянского языка, свидетельство непобедимого духа армянского народа, уникальная сокровищница для национального самопознания.

Ключевые слова: Ованес Туманян, кредо, “прекрасное и доброе”, стремление к совершенству, народное творчество, писатель и общество.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ – ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ Անի Եղիազարյան

Մինչ արևելքի հեքիաթների թարգմանությունը¹ Թումանյանն արևելյան գրականության հանդեպ արդեն ուներ տևական հետաքրքրություն, որի վկայությունն են նաև այն բազմաթիվ գրույցները, որոնցում արտահայտված են բանաստեղծի մտքերն այդ գրականության մասին, նաև գրողի անձնական գրադարանում այս թեմայով հարուստ հրատարակությունները:

Հովհ. Թումանյանը թարգմանություններ կատարում էր հիմնականում ռուսաց լեզվից, որին տիրապետում էր հայերենին հավասար: Սակայն օտար լեզուներով երկերի, հատկապես հեքիաթների

թարգմանության ժամանակ ձեռքի տակ ռուսերենին զուգահեռ ուներ նաև բնագիր լեզվով նյութեր և համապատասխան բառարաններ: Թարգմանչի հիմնական խնդիրը նա համարում էր բնագրի հարազատ բույրն ու հրապույրը» այլ լեզվի միջոցով հնարավորինս հարազատորեն հաղորդելը. «Չէ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը, շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքա՜ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՜ն սեր...»³⁸: Թեև մեջբերումը վերաբերում է բանաստեղծությանը, բայց համոզված կարող ենք ասել, որ թարգմանիչ Թումանյանը նույն կերպ էր վարվում նաև հեքիաթների թարգմանության պարագայում: Եվ հենց այդ շնորհքի ու սիրո ստեղծագործական համատեղումն է, որ թումանյանական թարգմանություններին հաղորդում է բնագրին համարժեք գույն ու բույր:

Հեքիաթը³⁹ որպես ժողովրդական իմաստության խտացում, Թումանյանի ուղեկիցն է եղել դեռ մանուկ տարիքից, երբ Լոռվա հրաշավառ բնության մեջ մեծացող փոքրիկին մայրն անընդհատ պատմում էր հեքիաթներ, Լոռվա իգիթների մասին առասպելներ, նախապապերի քաջագործություններն ու նրանց հերոսական պատմությունները:

Ինքնակենսագրական գրառումներում առանձին շեշտվածությամբ են արտահայտված այդ ամենի նկատմամբ մանուկ Հովհաննեսի տպավորությունները, որոնք, որպես նվիրական հիշողություններ, թևածում էին նրա մտքում.

«Կնանիք մեզ վախեցրին իբրև քաջքեր, Թագուհին – հեքիաթ, Նեստն և այլ հեքիաթներ:

Իմ պապերից պատմություններ:

Մեր մեծերից կենդանի մնացածները և նրանց զրույցը:

Մելքոնանց Օհաննեսի առակները»³⁹...

Լոռու «հին-հին» քաջերի սխրագործությունների մասին հյուսված ասքերը դեպքերին ականատես ծերերը առանձին ոգևորությամբ ու երանգավորումներով պատմում էին ձմռան երկար գիշերներին օջախի շուրջ հավաքված, որոնց շարքում էր և մանուկ Հովհաննեսը: Եվ այդ ասքերի գլխավոր դրուցագույններն էլ նրա նախնիներն էին՝ Մեհրաբ և Հովակիմ յուզբաշիները: Պատմություններն առմիշտ դրոշմվում էին նրա հիշողության մեջ, դառնում լեզենդներ, որոնց հաղորդակցվում էր Թումանյանը անմիջական աղբյուրից՝ ասացողներից. նրանք բանաստեղծի հարազատներն էին, ազգականները, համագյուղացի ծերունիներն ու ընկերները: Ինքնակենսագրական հատվածում հիշատակված Թագուհին հորեղբոր կինն էր, Նեստն՝ մանկության լավագույն ընկերը: Վերջինիս մասին հիշում է, թե՛ մի ընկեր ունեինք, անունը Նեստ: Էնքա՜ն հեքիաթ գիտեր, Էնքա՜ն հեքիաթ գիտեր, որ ոչ ծեր ուներ, ոչ տուտը»⁴⁰:

«Դարձ» անավարտ պոեմի հերոսի բերանով էլ պիտի հիշեր.

...Եվ նստած իրեն տատերի գոգում

Ականջ էր դրել նրանց հեքիաթին,

Կամ ինչպես իրան պապերն աննկուն

Պատերազմել էին,

Ախոյան էին կանգնել հավատին:

...Երբ որ իրանց հին սրահի առաջ

Հավաքվում էին ծերերը մոռյլ

Եվ զրույց անում անցած օրերից...

Եվ նա հիշում էր

Խաղաղ իրիկունն յուր հայրենիքի,

Երբ որ աստղածին երկնքի տակին,

Եվ լուսնի դիմաց պատմել էին նրան

Ավանդություններն իրանց աշխարհքի:

³⁸ Թումանյան Հովհ., ԵԼԺ հ.7, Եր., 1995, էջ 471:

³⁹ Պատմա-Բանասիրական հանդես, ԳԱԱ, առանձնատիպ, N1 (32), Եր., 1966, էջ 178:

⁴⁰ Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 5, Եր., 1994, էջ 142:

Եվ այս ամենն իր մեջ կրելով էլ հետագայում անիմաստ, հոգի մաշող, բայց հարկադրված բանակոծվելու միջոցով թուլանալու վստահ պիտի շեշտեր. «...ես լոռեցի եմ ու էն գլխից, ոչ «դիպվածով» սիրել ու հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով, և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց»⁴¹:

Այսպիսով՝ ժողովրդական բառ ու բանն էլ դառնում են թուլանալու միջոց, որը հետագայում մշակվում է, հղկվում ու սկսում աճել գիտական լուրջ հենքի վրա, դառնում նրա գեղագիտական աշխարհընկալման արտահայտչաձև. «Թուլանալուն ունեւ հեքիաթի ժանրի գիտական մոտեցում, հեքիաթի պոետիկայի առանձնահատուկ՝ գրեթե անատոմիական ընկալում, որ ավելի ուշ հեքիաթի մեծագույն տեսաբան Վլ. Պրոպր վերածեց հեքիաթի ճշգրիտ տեսության»⁴²:

Հեքիաթի մշակման գիտական-տեսական չափանիշների մասին թուլանալուն առանձին հոդվածային անդրադարձ չունի, սակայն այս կամ այն կերպ նա արտահայտել է իր իմացության լայնությունը:

«Կդերական բթամիտ դրամբյանների» դեմ պայքարող գրողը հաճախ հարկադրված է եղել պատասխան հոդվածներով հանդես գալ, որոնց մեջ էլ արտահայտվում են նրա՝ հեքիաթ մշակելու կամ թարգմանելու սկզբունքները. «...էն ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավերքները գրում են՝ որտեղ են լսել, երբ են լսել, ով է պատմողը, քանի տարեկան և այլն, և այլն, որովհետև էն արձանագրություն է, պրոտոկոլ է, և պարտավոր են նույնիսկ նրա սխալներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան: Իսկ մշակածի, գրական լեզվով պատմած, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, չափական ձևի վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առած»⁴³: Թուլանալուն քաջատեղյակ էր հեքիաթամշակման համաշխարհային չափանիշների, օրինակներ էր բերում ժողովրդական նյութի մշակմամբ զբաղված խոշոր գրողների՝ Եզոպոս, Լաֆոնտե, Կոլիով, Ուիլյամսոն, Գյոթե, Պուշկին, Գրիմ եղբայրներ: Եվ հեքիաթների մշակման գործին զուգահեռ թուլանալուն իր ստեղծագործական ժառանգությունը հարստացնում էր նաև թարգմանական նյութերով:

Նրա թարգմանությունների աշխարհագրական քարտեզը խիստ բազմազան է: Սովորաբար թուլանալուն չէր կենտրոնանում որևէ հեղինակի վրա: Ինչպես նախորդ գլուխներում համոզվեցինք՝ բավարարվում էր նրանցից մեկ կամ մի քանի բնորոշ ստեղծագործությունների թարգմանությամբ, բայց այդ փոքրիկ կտորի միջոցով էլ նա կարողանում էր հայ ընթերցողին հասցնել օտարազգի տվյալ հեղինակի գեղարվեստական աշխարհի ցայտուն գծերը, ճանաչելի դարձնել նրա գրական տեսակը՝ այդ ձևով ներկայացնելով նաև սեփական ըմբռնումներն ու խոհերը:

Մեր աշխատանքի այս բաժնում անդրադառնալով թուլանալուն թարգմանական հեքիաթներին, մասնավորապես՝ արևելյան (հնդկական, ճապոնական, արաբական) հեքիաթներին, էլ ավելի մարամասն կքննենք նրա՝ հեքիաթագիտության և հեքիաթամշակման մեթոդների իմացության խորությունն ու տարողունակությունը: Եթե նախորդ գլուխներում քննության նյութ դարձած թարգմանական գործերում թուլանալուն ավելի հարազատ էր մնացել բնագրին և կատարել հոգեշունչ թարգմանություններ, ապա բանահյուսական այս ժանրի՝ հեքիաթի դեպքում, նա հանդես է գալիս ոչ թե սոսկ թարգմանիչ, այլ նաև ուսումնասիրող, համեմատող և հեքիաթագետ: Ինչպես հայ ժողովրդական հեքիաթների մշակման ժամանակ, այնպես էլ օտար հեքիաթների թարգմանության դեպքում թուլանալուն նախ և առաջ հավաքում էր հեքիաթների տարբերակները, դրանցից ընտրում և թարգմանում էր ամենաբնորոշ, ամենաէական տարբերակը՝ մյուսներից օգտագործելով ինչ-ինչ անհրաժեշտ հատվածներ: Անհրաժեշտության դեպքում փոփոխում էր հերոսների անվանումներն ու կատարում չափածո հատվածների հավելումներ՝ մատուցվող նյութն ազգային մտածողության յուրահատկություններին ավելի մոտեցնելու, ասելիքը ամբողջությամբ տեղ հասցնելու նպատակով:

Ինչպես գիտենք, հեքիաթը խոսքարվեստի հնագույն տեսակներից է, ժողովրդական-բանահյուսական առավել տարածված ժանրերից մեկը: Բովանդակային առումով փոքրիկ մի պատմություն, եղելություն, որը գրեթե միշտ ունենում է բարի ավարտ: Անսահման է հեքիաթի պատմողական հիմքը, ինչպես անսահման է մարդկային երևակայությունը: Այն ունի ժամանակի ու տարածության ուրույն չափանիշներ, երևույթների պատճառահետևանքային կապի իր տրամաբանությունը: Աշխարհում թերևս չկա ժողովուրդ, որ իր հեքիաթը չունենա: Եվ ինչպես

⁴¹ Թուլանալուն Հովհ., ԵԼԺ հ. 6, Եր., 1994, էջ 164:

⁴² «Հենգելն ու Գրեյտեր. Կարմիրկը», «Զանգակ-97» հրատ., Եր., 2013, էջ 7:

⁴³ Թուլանալուն Հովհ. ԵԼԺ հ. 7, էջ 71:

Թումանյանն էր սիրում ասել. «Ամենամեծ ստեղծագործողն ինքը ժողովուրդն է, և նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը»⁴⁴ :

Ավելին՝ աշխարհի գրեթե բոլոր հեքիաթները իրար շատ նման են, օժտված են սյուժետային մի ընդհանուր համակարգով: Ինչպես գիտենք, այդ սյուժեների թիվն անսահմանափակ չէ, բայց սա բնավ էլ չի նշանակում, թե մեկը փոխառնվել է մյուսից: Հատկապես նման են լինում հարևան և ընդհանուր մշակութային ենթաշերտ ունեցող ժողովուրդների հեքիաթները: Այդուհանդերձ, դրանք զգալիորեն տարբերվում են իրենց ոճական ու անգամ գաղափարական բնութագրերով, յուրաքանչյուր տարածաշրջանին ու ժողովրդին հատուկ բարոյահոգեբանական շեշտադրումներով և խոհափիլիսոփայական ընդհանրացումներով:

Թումանյանին շատ է հրապուրել արևելյան հեքիաթը՝ ժողովրդական երևակայության իր գունագեղ ու իմաստուն աշխարհով: Նրա գրադարանում կարելի է գտնել արաբական, չինական, հնդկական, ճապոնական հեքիաթների բազմաթիվ հրատարակություններ ու տարբերակներ:

Արևելյան հեքիաթի թարգմանչի առաջ միշտ էլ ծառանում է մի կարևոր խնդիր՝ ինչպես համատեղել գրական և ժողովրդախոսակցական ու բարբառային լեզուն, որպեսզի չխաթարվի շարադրանքի ոճական հենքը՝ արտահայտելով նաև հեքիաթի իմաստային խորքը. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհքում – ավելի լավ երկրներում էլ դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»⁴⁵: Անգամ գեղարվեստական գրականության մեջ սիմվոլիզմի ծնունդը նա համարում էր «մի հանդուգն ձգտում հեքիաթին մոտենալու»:

«Նրա թարգմանած հեքիաթները մրցում են իրենց բնօրինակների հետ, որովհետև դրանք կյանքով լի մի-մի պատկերներ են՝ ենթարկված հայկական ժողովրդական հեքիաթների ներքին, յուրահատուկ օրինաչափություններին և ներթափանցված ժողովրդական-խոսակցական լեզվի հարուստ արտահայտչամիջոցներով»⁴⁶, – գրում է ուսումնասիրողը:

Այսպիսով՝ ինչպես հայկական, այնպես էլ օտար ազգերի հեքիաթների հետ Թումանյանի հանդիպումը մի մեծ նախապատրաստական ընթացք էր ենթադրում, երբ հեքիաթի մշակողն ու թարգմանիչը հավաքում էր համապատասխան նյութեր՝ մշակույթների խորքային ծանոթություն, լեզվական հնարքների տիրապետում, տարբերակների հավաքում և զննում, օժանդակ այլ նյութերի ուսումնասիրում, ինչն էլ թույլ էր տալիս նրան յուրաքանչյուր հեքիաթի մոտենալ գրեթե սեփական ստեղծագործության ընկալմամբ:

Նույնն է նաև արևելյան հեքիաթների թարգմանության պարագայում: Նախ և առաջ ընտրված հեքիաթները նրա ողջ ստեղծագործական ասելիքի ընդհանուր շղթան լրացնող օղակներ են, որոնք կամ ամրապնդում են նրա արտահայտած մտքերն ու գաղափարները, կամ արտահայտում նոր խոհերն ու մտորումները: Որպես համամարդկային արժեքներ՝ Թումանյանը երբեք չի ձգտում նյութի մեջ կիրառելու ավելորդ լրացումներ՝ տվյալ ժողովրդի ազգային կոլորիտը շեշտադրված ներկայացնելու համար, որովհետև թարգմանության նպատակը բնավ էլ դա չի եղել: Այլ ինչ-ինչ հարցերի շուրջ մարդկային մտածողության այն ընդհանուր դրսևորումները, որոնք իրենց արտահայտչաձևն են գտել հեքիաթի ժանրի միջոցով: Ինչպես հայկական ժողովրդական հեքիաթների մշակման դեպքում չափազանց հարուստ է Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, այնպես էլ արևելյան հեքիաթների պարագայում: Հետաքրքիրն այն է, որ անգամ տպագրության հանձնելուց հետո էլ մեծ հեքիաթագիրը շարունակել է մատուցվող նյութի բյուրեղացման աշխատանքը: Տպագիր տարբերակներում նրա ձեռքով արված փոփոխությունները, լրացումներն ու սեղմումները դրա լուռ վկան են: Իսկ այդ սրբագրումները չափազանց տարբեր են՝ ամբողջական նախադասության հավելում կամ կրճատում, բառի հոմանշային կիրառում, ժամանակաձևի շտկում, անգամ՝ որոշյալ հոդի փոփոխում: Եվ այդ ամենը համեմատության մեջ ընթերցելիս՝ իրապես տարբերակից տարբերակ անցումները դառնում են էլ ավելի կատարյալ՝ բանավոր հեքիաթասացության յուրատեսակ վարպետությամբ:

Այսպիսով՝ Արևելքի ժողովուրդների իմաստության ու մշակութային պատկերացումների բարձրագույն արտահայտությունը համարելով հեքիաթները՝ Թումանյանը ոչ միայն անգերազանցելի

⁴⁴ Թումանյան Նվ., «Հուշեր և գրույցներ», Եր., 1987, էջ 83:

⁴⁵ Թումանյան Հովհ., ԵԼԺ հ.10, Եր., 1999, էջ 424:

⁴⁶ Վարդանյան Ա., «Հովհաննես Թումանյանի հեքիաթները», Եր., 1986թ., էջ 154:

արվեստով թարգմանեց ու փոխադրեց հնդկական, ճապոնական, արաբական շատ հեքիաթներ, այլև բուն իմաստով հայացրեց դրանք՝ հարստացնելով ու ընդարձակելով հայ ազգային հեքիաթագրական մշակույթի սահմանները: Թումանյանի փոխադրած արևելյան հեքիաթների շարքում առանձնանում են «Ոսկի քաղաքը» և «Անգին քարը»՝ ոչ միայն իրենց գեղարվեստական կատարելությամբ, այլև նրանով, որ ամենից որոշակիորեն են կիզակեցնում Թումանյան մտածողի ու գեղագետի հասարակական ու բարոյական իդեալները, որոնք այս կամ այն կերպ արտահայտություն են գտել նրա բազմաթանր ստեղծագործության բոլոր էջերում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ինչպես հայկական, այնպես էլ օտար ազգերի հեքիաթների հետ Թումանյանի հանդիպումը մի մեծ նախապատրաստական ընթացք էր ենթադրում, երբ հեքիաթի մշակողն ու թարգմանիչը հավաքում էր համապատասխան նյութեր՝ մշակույթների խորքային ծանոթություն, լեզվական հնարքների տիրապետում, տարբերակների հավաքում և զննում, օժանդակ այլ նյութերի ուսումնասիրում, ինչն էլ թույլ էր տալիս նրան յուրաքանչյուր հեքիաթի մոտենալ գրեթե սեփական ստեղծագործության ընկալմամբ: Եվ թարգմանական բարձր որակ ապահովելու համար Թումանյանն առաջնորդվում էր սեփական սկզբունքներով:

Հիմնադրամբ. հեքիաթ, թարգմանություն, Հովհաննես Թումանյան, արևելյան:

TUMANIAN'S PRINCIPLES ON DEVELOPMENT AND TRANSLATION OF THE EASTERN FAIRY TALE

Ani Yeghiazaryan

Toumanian's meeting with both Armenian and foreign fairy tales meant a great preparation process, when the tale maker and translator was collecting relevant material, including deep acquaintance in cultures, mastering language skills, collecting and analyzing versions, studying other supporting materials, which allowed him to get each of the fairy tale almost to his own comprehension. And Toumanian was guided by his own principles to ensure good quality of the translation.

Keywords: fairy tale, translation, Hovanes Tumanian, eastern.

КОНЦЕПЦИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА ПРИ ОБРАБОТКЕ, ПЕРЕВОДЕ И ПЕРЕЛОЖЕНИИ ВОСТОЧНЫХ СКАЗОК

2. Удачливый – такой, которому все удается; удачный – успешный, хороший, правильный (человек, поездка, покупка, выбор).	2.Удачливый человек, удачная поездка, удачная покупка, удачный выбор	2. Հաջողակ մարդ, բարեհաջող ուղևորություն, հաջող գնում, բարեհաջող ընտրություն:
3. Эффектный – производящий сильное впечатление; эффективный – действенный, дающий эффект (платье, жест, механизм, технология).	3.Эффектное платье, эффектный жест, эффективный механизм, эффективная технология	3 Տպավորիչ զգեստ, տպավորիչ ժեստ, արդյունավետ մեխանիզմ, արդյունավետ արտադրություն
4. Вбежать – бегом проникнуть куда-либо; взбежать – бегом подняться (класс, комната, третий этаж)	4. Вбежать в класс, взбежать в комнату, взбежать на третий этаж.	4. Ներս վազել դասարան, ներս վազել սենյակ, վազելով բարձրանալ երրորդ հարկ
5. Каменный – каменистый (дом, почва, сооружение, берег, фундамент, соль, выражение лица, земля, уголь, сердце, дно); обсудить – осудить (новый проект, на длительный срок, поступок друга, грабителя, поведение учеников); рыбий – рыбный (хвост, запах, жир, котлеты, чешуя, промышленности, глаза, ловля) (57).	5. Каменный дом, каменистая почва, каменное сооружение, каменистый берег, каменный фундамент, каменная соль, каменное выражение лица, каменистая земля, каменный уголь, каменное сердце, каменное дно; обсудить новый проект, осудить на длительный срок, поступок друга, грабителя, обсудить поведение учеников; рыбий хвост, рыбий запах, рыбий жир, рыбы котлеты, рыба чешуя, рыбная промышленность, рыба глаза, рыбная ловля	5. Քարե տուն, քարքարոտ բնահող, քարե կառույց, քարքարոտ ափ, քարե հիմք, քարաղ, դեմքի քարացած արտահայտություն, քարքարոտ հող, քարածուխ, քարսիրտ, քարքարոտ հատակ. քննարկել նոր նախագիծ, դատապարտել երկարատև ժամկետով, դատապարտել ընկերոջ վարմունքը, դատապարտել կողոպտիչին, քննարկել աշակերտների վարքը. ձկան պոչ, ձկան հոտ, ձկան յուղ, ձկան կոտլետներ, ձկան թեփ, ձկնային արդյունաբերություն, ձկան աչքեր, ձկնորսություն:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Թարգմանական վարժություններն ըստ էության հիմնված են կրկնության վրա, նույն միտքը աշակերտը կրկնում է տարբեր լեզուներով, դրանցով կազմում է բառակապակցություններ կամ նախադասություններ և վերհիշում է՝ արդյոք ճիշտ է կիրառել տվյալ արտահայտությունը տվյալ խոսքային միջավայրը այլ լեզվով ներկայացնելիս: Ուղղորդված փորձառության մեթոդաբանության հիմունքով անընդհատ կրկնվող արտահայտությունները դառնում են հիմնական և բազային տվյալ լեզուն սովորողի համար: Այն աստիճանաբար վերածվում է ինտերակտիվ մոտեցման, ըստ որի լեզուն

գործածվում է ցանկացած իրավիճակում: Իրավիճակներ ստեղծելու նպատակով կազմակերպում ենք դերային խաղեր, որտեղ կարևոր նշանակություն ունեն թարգմանիչ-աշակերտները: Ուսուցչական գործունեության ընթացքում հիմնականում կիրառում ենք լեզվի ուսուցման բնական մեթոդը՝ օտար լեզուն դասավանդելով մայրենի լեզվի նման՝ սովորեցնելու գործընթացը իրականացնելով օտար լեզվով՝ մայրենի լեզվի կիրառումը կատարելով միայն թարգմանական վարժություններ իրականացնելիս:

Հիմնադրամեր. օտար լեզու, կառուցողական կրթություն, անուն խոսքի մասեր, դասագիրք, կապակցելիություն, խոսքիմասային փոխանցում, բառապաշար, աուդիո-լեզվական մեթոդով:

ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДНЫХ УПРАЖНЕНИЙ В ПРОЦЕССА ИЗУЧЕНИЯ ЧАТЕЙ РЕЧИ

Инеса Гардышян

В статье руководствовались структурными принципами обучения иностранного языка, придав важное значение роли грамматического перевода. В 10-ом классе изучаются части речи, в процессе усвоения которых важное значение придается переводным упражнениям. Параллельно с грамматическими переводами представляются и упражнения по обогащению словарного запаса, в которых важное место уделяется правильному употреблению формообразующих групп слов и возможности сочетания слов.

В процессе обучения говорения важное место уделяется и переводу пословиц и поговорок как выражение народного языкового мышления, которые имеют также культурную ценность и часто встречаются в устной речи.

По сути переводные упражнения основаны на повторении, ученик одинаковую мысль повторяет на разных языках, ими составляет словосочетания или предложения и вспоминает, правильно ли употребил данное выражение в данной языковой среде на другом языке. Руководствуясь принципом опытности методологии постоянно повторяющиеся выражения становятся основными и базовыми для изучающего данный язык. Преподавая иностранный язык как родной язык, мы в течение нашей учительской деятельности в основном употребляем естественный метод обучения языка.

Ключевые слова: иностранный язык, структурное образование, части речи, учебник, сочетаемость, перенос частей речи, словарный запас, аудиоязыковой метод.

THE PECULIARITIES OF TRANSLATION EXERCISES IN THE LEARNING PROCESS OF THE PART OF SPEECH

Inesa Gardishyan

In this article we were guided by the structural principles of learning of foreign language giving importance to the role of grammatical translation.

The parts of speech are studied in the 10th form and translation exercises are an essential part of their assimilation process.

Exercises to enrich vocabulary are also presented parallel with grammatical translations. In these exercises we give importance to the correct use of the formative groups of words and the opportunities of combining words. The translation of proverbs and savings is also vital in the speech learning process as they are considered to be expressions of folk linguistics, have cultural value and are frequently used in oral speech.

In fact translation exercises are based on repetition. The pupil expresses the same idea in difficult languages, makes word-combinations or sentences with them and then tries to find out if he has used that very expression in that very language environment correctly.

Guided by the principle of experience of methodology, frequently repeated expressions become basic for the learner of that very language.

During our teaching activity we mainly use the natural method of language lie teaching a foreign language like a native one.

Key words: a foreign language, structural education, parts of speech, a textbook, compatibility, transference of the parts of speech, vocabulary, an audiolinguistic method.

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱՑԱԿԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ
Անահիտ Հովնիկյան**

Լեզուների գիտական ուսումնասիրությունն սկսվում է 5-րդ դասարանից՝ առաջին հերթին հենվելով տարրական դասարաններում ձեռք բերած տեսական գիտելիքների վրա: Ճանաչելով հիմնական խոսքի մասերը մայրենի լեզվում՝ աշակերտները դրանց զուգահեռ արտահայտություններն են սովորում օտար լեզուների դասերին համադրություն-ներունակություն մեթոդական սկզբունքով⁶⁶: Ի դեպ պետք է նկատել, որ օտար լեզվի դասագրքերում⁶⁷ ներկայացված քերականական իրողությունները մայրենի լեզվի դասագրքերին զուգահեռ չեն ներկայացվում, ուստի այստեղ պարտադիր է դառնում լեզուներ դասավանդող ուսուցիչների համագործակցությունը:

5-րդ դասարանում «Մայրենի»⁶⁸ դասընթացի շրջանակներում աշակերտները արդեն գիտականորեն ծանոթանում են հնչյուն, տառ, վանկ և շեշտ հասկացություններին՝ տարբերակելով ոչ միայն հնչյունների ձայնավոր և բաղաձայն տեսակները, այլ նաև նրանց օրինաչափ և անկանոն կիրառությունները, ուղղագրական և ուղղախոսական առանձնահատկությունները, փոփոխությունները: Բաղաձայնները աշակերտներին են ներկայացվում եռաստիճան համակարգով, սակայն դասագրքում չեն նշվում նրանց ձայնային որակի առանձնահատկությունները, այնինչ, կարծում ենք, սա պարտադիր է հատկապես անգլերենի ճիշտ ընթերցանություն կազմակերպելու համար: Ինչպես՝ հոգնակի թվի կազմության ժամանակ պետք է տարբերակել խուլ և ձայնեղ բաղաձայնները՝ բառերը ճիշտ արտասանելու համար:

Հայերենի հոգնակի թվի ընդհանրական արտահայտություններին աշակերտները ծանոթանում են տարրական դասարաններում, սակայն 5-րդ դասարանի «Մայրենի» դասագրքում խոսքիմասային քերականական իրողությունների մասին տեղեկություններ և հանձնարարություններ չկան, ուստի ամբողջ ծանրաբեռնվածությունն ընկնում է ուսուցչի վրա, որ գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցանությանը զուգահեռ աշակերտների ուշադրությունը դարձնի առարկա ցույց տվող բառերի քերականական արտահայտություններին: Խոսքային միջավայրում ծանոթանալով գոյականի թվի քերականական կարգի արտահայտություններին՝ առաջարկում ենք զուգադրության աղյուսակի⁶⁹ միջոցով կատարել համեմատություն երկու լեզուների՝ գոյականի եզակի և հոգնակի թվի կազմությունների առանձնահատկությունների միջև (տե՛ս աղյուսակ 1)

⁶⁶ Աստվածատրյան Մ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 28:

⁶⁷ Գասպարյան Գ., Անգլերեն, Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Երևան ՄԱՆՄԱՐ հրատարակչություն, 2014:

⁶⁸ Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 5, Էդիթ պրինտ հրատարակչություն, Երևան, 2015:

⁶⁹ Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան մեծ» հրատարակչություն, Երևան, 2004, էջ 82:

Աղյուսակ 1

ՁՈՒԳԱՂՐՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Հոգնակի թվի
արտահայտությունը
անգլերենում

Հոգնակի թվի
արտահայտու-
թյունը հայերենում

-**s** վերջավորությունը՝ որպես գոյականների
հոգնակի թվի արտահայտության
հիմնական միջոց
-**es** վերջավորությունը որպես հոգնակիի
արտահայտման բացառություն
-s վերջավորության արտասանությունը
բառավերջի խուլ և ձայնեղ բաղաձայններից
հետո
Հնչյունափոխությունը հոգնակիի
կազմության ժամանակ.

- բաղաձայն + y > ies (a country - countries)
- f > v + es (a shelf - shelves, a knife - knives)
- արմատի ձայնավորի փոփոխություն (a man - men, a mouse - mice)

-**եր, ներ** վերջավորությունները՝
որպես գոյականների հոգնակի թվի
արտահայտության հիմնական
միջոց:
-**իկ, -ալք** վերջավորությունները՝
որպես հոգնակիի արտահայտման
բացառություն
Հայերենում հոգնակիի
վերջավորությունները գրության և
արտասանության
տարբերություններ չունեն: Միայն
ն բաղաձայնով վերջացող
բազմական բառերի հոգնակիի
ժամանակ գրվում է կրկնակ **ն**, որն
արտասանվում է որոշակի
տևականությամբ:
Հայերենում հոգնակիի կազմության
ժամանակ հնչյունափոխվում են
փակ վանկի ի և ու ձայնավորները
միավանկ բառերում (տուն - տներ,
գիր - գրեր):

Այսպիսով ավելի ակնհայտ է լինում լեզուների տիպաբանական տարբերությունը, և աշակերտները հասկանում են, որ իրենց գիտելիքները սահմանափակված չեն առարկայական եզրագծերով, դրանք փոխլրացնող իրողություններ են:

Նման ձևով առաջարկվում է կատարել նաև ուղղական և սեռական հոլովների դասավանդման մեթոդաբանությունը: Սեռական հոլովը անգլերենում անվանվում է ստացական (Possessive Case) և արտահայտվում է **'s** վերջավորությամբ, վերջինս չի արտահայտվում **s**-ով կազմվող հոգնակիների դեպքում և գրավոր խոսքում ներկայացվում է միան' նշանը: Ի դեպ անգլերենում ստացական հոլովը բնորոշ է միայն անձնանիշ գոյականներին, իսկ հայերենում բոլոր գոյաններին հատուկ է սեռական հոլովը: Թեմայի ուսուցման շրջանակներում առաջարկում ենք ուսուցիչներին համագործակցել և բնագրի ընթերցանությանը զուգահեռ աշակերտներին բացատրել սեռական հոլովի արտահայտություն ժամանակակից հայերենում:

Գոյականի քերականական կարգերից աշակերտները պետք է իմանան նաև առման քերականական կարգի մասին: Ըստ բառական իմաստի տարրորոշման՝ առարկաները լեզուներում դասակարգվում են որոշյալ և անորոշ խմբերով: Անորոշության իմաստը հայերենում որևէ վերջավորությամբ չի արտահայտվում, երբեմն հստակ անորոշություն արտահայտելու համար խոսքում կիրառվում է **մի** անորոշ դերանունը: Անգլերենում անորոշության իմաստն արտահայտվում է **a** կամ **an** նախադիր

հարադրությամբ արտահայտվող հոդերով: Ընդ որում այստեղ կարևոր է բառի սկզբնահնչյունի ձայնավոր, թե՞ բաղաձայն լինելը: Որոշյալության իմաստը հայերենում արտահայտվում է համադրական վերջավորությունների՝ **ը, ն** հոդերի միջոցով, սրանց կիրառությունները նույնպես առնչվում են հնչյունների տեսակներին. որպես կանոն ձայնավորով վերջացող բառերն ստանում են **ն** հոդ, իսկ ձայնավորով վերջացող բառերը՝ կամ **ը**, կամ **ն** հոդ՝ անկախ հաջորդ բառի ինչ հնչյունով սկսվելուց: Անգլերենում որոշյալ հոդը մեկն է **the**, որը նույնպես ունի նախադաս հարադրական արտահայտություն և արտասանական տաբերություններ՝ կախված հաջորդ բառի ձայնավորով, թե՞ ձայնավորով սկսվելուց:

Հայերենի հոդերի ուղղագրության մասին վարժությունները կատարվում են հատկապես գրավոր աշխատանքների՝ թելադրության, փոխադրության, տեստային վարժությունների կատարման ժամանակ: Աշակերտները **ը** և **ն** հոդերի ուղղագրությունը սովորում են **ը** գաղտնավանկի և **ե, ռ** ձայնավորների ուղղագրությունը ուսումնասիրելու շրջանակներում: Այս դեպքում պարզ է դառնում, որ հոդերի կիրառությունը կախված է ոչ թե գրավոր նշանից, այլ հնչյունից: Այսպես՝ **ն** հոդը կիրառվում է (**ը**)սա, (**ը**)սպ, (**ը**)շա, (**ը**)զզ և նման հնչյունակապակցություններից առաջ, իսկ **ը** հոդը բառասկզվի **ե, ռ** տառերից առաջ, քանի որ այդ բառերը հնչում են համապատասխան **յ** և **վ** բաղաձայններով:

Մայրենիի դասերին ածական անունները աշակերտներին ուսուցանվում են որպես հատկանիշ ցույց տվող բառեր՝ առանց իմաստային տարբերակման: Անգլերենի դասերին աշակերտները ծանոթանում են ածականի համեմատության աստիճաններին, ուստի նպատակահարմար ենք գտնում մայրենիի գուգահեռ դասի շրջանակներում նույնպես անդադառնալ այս խնդրին՝ պարզելով դրական, բաղդատական և գերադրական ածականների արտահայտությունը հայերենում: Անգլերենում ածականի համեմատության աստիճանների կազմման համար նույնպես կարևոր է բառերի վանկերի քանակը. միավանկ բառերի համեմատության ածականները կազմվում են վերջածանցմամբ, իսկ բազմավանկ բառերինը՝ մակբայների հարադրմամբ: Հայերենում վանկերի քանակը կապ չունի, բոլոր համեմատության աստիճան ունեցող ածականների բաղդատական աստիճանը կազմվում է **ավելի** մակբայի հարադրմամբ, իսկ գերադրական աստիճանը **ամենա-** կամ **-ագույն** վերջածանցմամբ: Անգլերենում կան բառեր, որոնց համեմատության աստիճանը կազմվում է տարահիմքությամբ, հայերենում նման իրողություններ նույնպես չկան: Հետաքրքիր գուգադրություն կարելի է կատարել գերադրական աստիճանի հոդառության մասին, անգլերենում ածականի գերադրական աստիճան ունեցող բառերը անպայման արտահայտվում են **the** որոշյալ հոդով: Հայերենում նույնպես առկա է այս իրողությունը, այն տարբերությամբ որ որոշյալ հոդը հանդես է գալիս միայն ուղղական, տրական և հայցական հոլովներում:

Ածականի մասին վարժությունները 5-րդ դասարանի «Մայրենիի» դասագրքում սահմանափակվում են **ամենա-** նախածանցի կիրառության մասին վարժություններով: Մկրտիչ Կորյունի «Այգեպան Մոսին» և Մերգեյ Վարդանյանի «Թռիչք» պատմվածքներից աշակերտներին հանձնարարվում է գտնել **ամենա-** նախածանց ունեցող բառերը և պարզել, թե ինչ են ցույց տալիս: Սրան գուգահեռ մենք առաջարկում ենք կազմել նաև մյուս ածականների համեմատության աստիճանները և համեմատություններ կատարել անգլերենի և հայերենի միջև:

Դերանուններից աշակերտները պետք է ծանոթ լինեն անձնական, ցուցական և անորոշ և ժխտական տեսակներին:

Լրացնելով անձնական դերանունների հայերեն – անգլերեն գուգադրական աղյուսակը՝ պարզ է դառնում, որ հայերենում երրորդ դեմքի դերանունները սեռային տարբերակներ չունեն, հայերենը առանձին բառաձևերով է արտահայտում երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերը: Անգլերենում անձնական դերանուններն ունեն միայն սեռական և տրական հոլովաձևեր (աղյուսակներ 2, 3, 4).

Աղյուսակ 2						
Ուղղական հոլով	ես I	մենք we	դու you	դուք you	նա he նա she	նրանք they
Սեռական հոլով	իմ my	մեր our	քո your	ձեր your	նրա his her	նրանց their
Տրական հոլով	ինձ me	մեզ us	քեզ you	ձեզ you	նրան him, her	նրանց them

Աղյուսակ 3					
	Սա, այս this	սրանք these	դա, նա, it they	այդ, այն that	դրանք those

Աղյուսակ 4	
Դրական նախադասություններում	some մի քանի somebody ինչ-որ մեկը someone ինչ-որ մեկը something ինչ-որ բան
Հարցական նախադասություններում	any մի քանի anybody ինչ-որ մեկը anyone ինչ-որ մեկը anything ինչ-որ բան
Ժխտական նախադասություններում	no, none ոչ ոք not any ոչ ոք nobody ոչ ոք no one ոչ մեկը nothing ոչինչ

Թվական բառերին աշակերտները ծանոթ են ինչպես մայրենի, այնպես էլ մաթեմատիկա առարկաների շրջանակներում: Խոսքում կիրառելով և՛ քանակական, և՛ դասական թվականներ՝ աշակերտները պետք է ծանոթ լինեն նաև դրանց քերականական անվանումներին և կազմության առանձնահատկություններին: Հայերենում և անգլերենում 1-10 թվականները կազմությամբ պարզ են: 11-19 անգլերենում կազմվում է «միավոր + տասնավոր» կաղապարով, ի տարբերություն ժամանակակից հայերենի, որտեղ բոլոր տասնավորները կազմվում են «տասնավոր + միավոր» կաղապարով: Տասնյակները ածանցավոր կազմություններ են հայերենում, այդ ածանցի դերով հանդես է գալիս **սուն**-ը, անգլերենում **ty**-ն: Դասական թվականները ածանցավոր կազմություններ են ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում: **Մեկ** բառի դասականը արտահայտվում է տարբեր կազմություններով՝ **սոնաջին** և **first**: Հայերենում մասնակի ինքնատիպությամբ է կազմվում նաև **երկու**, **երեք** և **չորս** թվականների դասականները, անգլերենում՝ **երկու** և **երեք**՝ **second**, **third**: Մյուս բոլոր թվականների դասականները հայերենում կազմվում են **-երորդ** ածանցով, անգլերենում՝ **-th** ածանցով: Անգլերենում **first**, **second**, **third** անկանոն դասականները պահպանվում են բաղադրյալ թվականների կազմություններում, հայերենում՝ ոչ, ինչպես՝ **one hundred and twenty-third** - **հարյուրքսաներկուերորդ**: Ինչպես երևում է օրինակից հայերենում դասական թվականները բոլոր դեպքերում գրվում են միասին՝ ի տարբերություն քանակական թվականների, հմմտ. **հարյուր քսաներկու**: Քանակական և դասական թվականները ունեն գրության զուգահեռներ. բոլոր առաջադեմ ժողովուրդները կիրառում են արաբական թվանշանները: Դասական թվականների դեպքում դրանք գրվում են համապատասխան ածանցի վերջնահնչյուններով, օրինակ 1ին, 2-րդ և այլն 1st, 2nd, 3rd, 4th և այլն:

5-րդ դասարանում թվական բառերի ճիշտ արտասանության մասին ներկայացվում է «Շեշտ» դասի բացաճատրության շրջանակներում: Դասական թվականները ներկայացվում են որպես հարաշեշտ բառեր;

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ելենելով երկարամյա մանկավարժական փորձից՝ վստահորեն պետք է նշել, որ օտար և մայրենի լեզուների համադրական ուսուցումը արգասավոր է, քանի որ այս դեպքում մատչելիության սկզբունքը զուգակցվում է գիտականության սկզբունքի հետ⁷⁰: Յուրաքանչյուր գիտություն ունի իր ներքին տրամաբանությունը, որով նրա առանձին բաղադրամասերը սերտորեն կապվում են միմյանց հետ և

⁷⁰ **Ջուհարյան Թ.**, Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1978, էջ 163:

կազմում մի կոռ ամբողջություն: Լեզվական յուրաքանչյուր իրողության բացատրություն սերտորեն կապվում է մյուս իրողության հետ, այդպես է նաև տարբեր լեզուների ուսումնասիրության ժամանակ:

Հիմնաբաներ. լեզուների գիտական ուսումնասիրություն, համադրություն-ներունակություն մեթոդական սկզբունք, ուսուցիչների համագործակցություն, մատչելիության սկզբունք, գիտականության սկզբունք, լեզվական իրողության:

ПРЕПОДАВАНИЕ НОМИНАЛЬНЫХ ГРАММАТИЧЕСКИХ РЕАЛИЙ АРМЯНСКОГО И АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВ С ИСПОЛЬЗОВАНИЕМ МЕЖДИСЦИПЛИНАРНОЙ МЕТОДОЛОГИИ

Анаит Овникян

Научное изучение языков начинается с пятого класса. Теоретические знания, полученные в элементарных классах, одновременно изучаются иностранными языками с комбинированным методологическим принципом. Грамматические реалии, представленные в учебниках родном языке, поэтому сотрудничество учителей в преподавании языка становится обязательным для глубокого обучения, поскольку в этом случае принцип доступности сочетается с принципом науки. Каждая наука имеет свою внутреннюю логику, в которой ее отдельные компоненты тесно связаны друг с другом и образуют сплошное целое. Объяснение каждого лингвистического факта тесно связано с другой реальностью, а также с изучением разных языков.

Ключевые слова: научное изучение языков, комбинированный методологический принцип, сотрудничество учителей, принцип доступности, принцип науки, лингвистического факта.

TEACHING THE REALITIES OF ENGLISH AND ARMENIAN NOMINAL GRAMMAR WITH INTERDISCIPLINARY METHODOLOGY

Anahit Hovnikyan

The scientific study of languages starts from the fifth class. Theoretical knowledge acquired in elementary grades is simultaneously being taught students foreign languages with a combination-ability methodological principle. The grammatical realities presented in foreign language textbooks are not presented in parallel with native language textbooks, so the so-operation of teachers in language teaching becomes mandatory in order to have profound learning, because in this case the principle of accessibility is combined with the principle of science. Each science has its own internal logic, in which its separate components are closely linked to one another and form a solid whole. The explanation of every linguistic fact is closely related to the other reality, as well as the study of different languages.

Keywords: the scientific study of languages, combination-ability methodological principle, teaching mandatory, the principle of accessibility, principle of science, linguistic fact.

ԱՇԱԿԵՐՏԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ԱՅԲԲԵՐԱՆԱՐԱՆ» ԵՎ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ Անահիտ Վարդանյան

Աշակերտի արժեքային համակարգի ձևավորման կարևոր նախապայմաններից է «հաղորդակցական և կազմակերպչական հատկությունների, աշխատասիրության,

նպատակապաշարության, պատասխանատվության և մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունք»⁷¹ ունենալը, որը ենթադրում է պարտավորեցնող, ինտեգրող և հետագոտող կրթակարգ⁷²:

Մեր աշխատանքային գործունեության ընթացքում համադրելով առարկայական տարբեր ծրագրերը՝ առաջնորդվում ենք կառուցողական կրթության հիմունքներով՝ կիրառելով ինչպես փոխներգործուն և ֆիզիկական միջոցներ, այնպես էլ չմշակված նախնական տվյալներ և սկզբնաղբյուրներ: Դասավանդման կառուցողական մոտեցմամբ իրական աշխարհի բազմազան հնարավորություններն սկսում ենք աշակերտներին ներկայացնել միջառարկայական կապերի շրջանակներում «Այբբենարան»⁷³, «Մաթեմատիկա»⁷⁴ և «Տեխնոլոգիա»⁷⁵ դասագիրք-տետրերի համադրությամբ: Սույն հոդվածում քննել ենք «Այբբենարան» և «Տեխնոլոգիա» դասագիրք-տետրերի առնչությունները՝ որպես աշակերտների լեզվամտածողության զարգացման մեկ դրսևորում:

Աշակերտի խոսքի զարգացումը ենթադրում է ազատ և անկաշկանդ արտահայտվելու կարողություններ և հմտություններ, որոնց խթանման համար առաջին հերթին հիմք են հանդիսանում նկարի շուրջ հորինված պատմությունները:

Թե՛ «Այբբենարանը», թե՛ «Տեխնոլոգիա» դասընթացն սկսվում են նկար-պատմությամբ: Աշակերտներին հանձնարարվում է պատմություն հորինել նկարի շուրջ՝ անվանելով առարկաները: Այստեղ մենք առաջարկում ենք առարկաներին զուգահեռ ներկայացնել դրանց վերգրվող գործողությունները և հատկանիշները, որոնք նախադասության մեջ արտահայտվում են ստորոցայի և որոշիչ շարահյուսական պաշտոններով: Այսպիսով աշակերտները հասկանում են, որ բառերը միմյանց նկատմամբ գտնվում են տրամաբանական կապի մեջ, և ցանկացած բառ չի կարող կապակցվել ցանկացած բառի: Զուգահեռելով «Այբբենարանի» և «Տեխնոլոգիա» դասընթացի առաջին նկարները՝ պարզ է դառնում, որ դրանք ներկայացնում են տարբեր իրավիճակներ: «Այբբենարանում» պատկերված է «Գիտելիքի օրը» դպրոցում, որտեղ հերոսներ են դարձել ուսուցիչները, ծնողները և աշակերտները⁷⁶: «Տեխնոլոգիայի» աշխատանքային տետրի առաջին էջին պատկերված է դպրոցից դուրս առօրեական պատմություն, ուր երեխաները տնից հեռու կազմակերպում են իրենց ամառային հանգիստը՝ պատասխանելով «Ի՞նչ կա մեր շրջապատում» և «Ի՞նչ նյութերից են դրանք պատրաստված» հարցերին⁷⁷:

Ներկայացված առաջադրանքից պարզ է դառնում, որ աշակերտի խոսքի զարգացման աշխատանքներն սկսվում են առաջին իսկ օրվանից: Ուսուցիչը քայլ առ քայլ կատարելագործում է աշակերտի լեզուն՝ ներշնչելով սեփական մտքերն ասելու համարձակություն:

Միջառարկայական կապեր ստեղծելը աշակերտին ուսումնական գործընթացի մեջ ներգրավելու կարևոր պայմաններից է, ուստի այն պետք է սկսել դեռևս նախաայբբենական շրջանից: Այսպիսով ավելի դյուրին է դառնում աշակերտի մտածողության զարգացումը, ստեղծագործական ունակությունների բացահայտումը: Տարրական դասարաններում մայրենիի և մաթեմատիկայի դասերին սովորած գիտելիքները՝ առարկաների միջև եղած հարաբերություններն ու առնչությունները, իրենց գործնական նշանակությունն են ստանում տեխնոլոգիայի դասերին:

Շարունակելով զուգադրումը նաև մաթեմատիկա առարկայի հետ նախաթվային շրջանում՝ աշակերտները կատարում են թվարկում, անվանում են իրենց իսկ ստեղծած երկրաչափական մարմինները: Այսպիսով եռակողմ հարաբերություն է ստեղծվում սովորած նյութը հասկանալու, կիրառելու համար, որի արտահայտման հիմնական միջոցը խոսքն է: Զուգադրումից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր գիտելիք փոխկապակցված է մյուսին, և դրանք իմանալու նպատակը կյանքում դրանց ճիշտ կիրառությունն է և դրանց մասին արտահայտվել կարողանալը:

⁷¹ «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, էջ 20:

⁷² Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այոթքս հրատակչություն, Երևան, 2004, էջ 18:

⁷³ Մարգարյան Վաչագան, Այբբենարան, ՄԱՆՄԱՐ հրատարակչություն, Երևան, 2012:

⁷⁴ Մկրտչյան Սուրբատ և այլք, Մաթեմատիկա, Առաջին մաս, դասագիրք-տետր հանրակրթական հիմնական դպրոցի առաջին դասարանի համար, Զանգակ հրատարակչություն, Երևան, 2017:

⁷⁵ Հովսեփյան Սահակ և այլք, Տեխնոլոգիա, Աշխատանքային տետր, Տիգրան Մեծ հրատարակչություն, Երևան, 2017:

⁷⁶ Մարգարյան Վաչագան, Այբբենարան, ՄԱՆՄԱՐ հրատարակչություն, Երևան, 2012, էջ 3:

⁷⁷ Հովսեփյան Սահակ և այլք, Տեխնոլոգիա, Աշխատանքային տետր, Տիգրան Մեծ հրատարակչություն, Երևան, 2017, էջ 3:

Շարունակելով դասագրքերի գուգադրումը՝ նկատում ենք, որ աշակերտներին ներկայացվում են տարբեր մասնագիտության տեր մարդկանց նկարներ: Այբբենարանում պատկերված են բժիշկ, զինվորական, ձմեռ պապ և պարուհի: «Տեխնոլոգիա» դասագրքում պատկերված են բժիշկ, էլեկտրագործ, պատշար, հյուսն, գոդոլ և դերձակ:

Այստեղ առաջարկում ենք ուսուցիչներին ներկայացնել այս մասնագիտությունների մասին փոքրիկ հետաքրքրաշարժ պատմություններ և հանձնարարել աշակերտներին խոսել իրենց սիրած մասնագիտությունների մասին՝ պատասխանելով «Ի՞նչ եմ ուզում դառնալ» հարցին:

Իմանալով տարբեր մասնագիտությունների մասին՝ աշակերտներին առաջարկում ենք կապակցել առաջին և երկրորդ դասերը՝ պարզելու, թե նշված մասնագետներից ով ինչ է կառուցել առաջին նկարում: Այսպես՝ *բժիշկը հետևում է երեխաների առողջությանը: Էլեկտրագործը օգնում է գոդոլին, որ նա պատրաստի երկաթե ձողեր ճոճանակի, դարպասի և լողավազանի համար: Հյուսնը պատրաստում է փայտե ցանկապատ այգիների համար: Պատշարը տուն է կառուցում: Դերձակը հագուստներ է կարում:* Պետք չէ սահմանափակվել դասագրքում նշված նկարներով, այլ պետք է նոր մասնագիտություններ ներկայացնել աշակերտներին կամ հանձնարարել, որ նրանք նոր մասնագիտություններ թվարկեն: Դասագրքերի համադրումից պարզ է դառնում, որ երկու դեպքում է պատկերված է բժիշկ, որ արտահայտում է այդ մասնագիտության կարևորությունը: Սակայն պակաս կարևոր չէ հատկապես մեր օրերում զինվորականի մասնագիտությունը և այստեղ առաջարկվում է պատմություններ լսել զինվորականների մասին, հիշել նրանց քաջագործությունները: Կյանքի յուրաքանչյուր իրողություն ուղեկցվում է տոնախմբությամբ: Ամենակարևոր և սիրելի տոնը Նոր տարին է, որի խորհրդանիշը ձմեռ պապն է: Այս դեպքում նույնպես աշակերտները չեն դադարում հետաքրքիր ու հակասական պատմություններ պատմել ձմեռ պապի ու նոր տարվա մասին՝ հիշելով, թե ինչ երգեր ու պարեր գիտեն տոների մասին:

Պետք է նկատել, որ դասագրքերում նշված մասնագիտությունները հիմնականում վերագրվում են տղամարդկանց, և աղջիկները այս դեպքում կաշկանդվում են սահմանափակ դերակատարումներ ունենալու պատճառով: Առաջարկում ենք ուսուցիչներին ներկայացնել նաև աղջկական այլ մասնագիտություններ նույնպես կամ նույն մասնագիտությունների աղջիկ կատարողներով նկարներ:

Մասնագիտությունների մասին քննարկումներից հետո հետաքրքիր է լինում «Ես մասնագետ եմ» վերնագրով թատերական ներկայացումը, որտեղ աշակերտներից յուրաքանչյուրը մարմնավորում է որևէ արհեստավորի կամ մասնագետի կերպար:

Իմանալով մասնագիտությունների ու նրանց պատրաստած տարբեր իրերի մասին՝ աշակերտներին տրվում է հարց. «Ի՞նչ ենք մենք պատրաստելու»: Այստեղ նրանք առաջին անգամ լսում են կիրառական արվեստին բնորոշ **օրիգամի, սպլիկացիա, կոմպոզիցիա** հասկացությունների մասին: **Օրիգամին** ճապոներեն բառ է, որ բառացի նշանակում է «դասավորած թուղթ», որպես արվեստի ճյուղ՝ սրա խնդիրն է առարկաներ ստեղծել թղթերից: **Սպլիկացիան** լատիներեն բառ է, որ բառացի նշանակում է միացում: **Սպլիկացիա** է կոչվում այն նախշը կամ պատկերը, որը գունավոր թղթի կամ գործվածքի կտորտանքներով ամրացված է հարթության կամ զգեստի վրա: **Կոմպոզիցիան** լատիներեն բառ է, որ նշանակում է «կազմում, հորինում»: Այն գեղարվեստական կառուցվածքային ստեղծագործություն է, որի բաղադրիչ մասերը դասավորված են որոշակի հարաբերակցությամբ:

Տիրապետելով գույներին՝ աշակերտները կարողանում են արտաքին հատկանիշներով անվանել նաև կենդանիներին: «Այբբենարանի» առաջին էջերին նրանց հանձնարարվում է գունանկարել տրված պատկերները և կատարել համադրություններ՝ ըստ առարկաների արտաքին հատկանիշների: Մրան գուգահեռ տեխնոլոգիայի դասերին առաջարկվում է իրենց սովորած դասերը պատկերել սպլիկացիաների միջոցով՝ աշխատելով թղթով, մկրատով և սոսնձով: Աստիճանաբար զարգացնելով աշակերտների մտածողությունը՝ նրանց համար ստեղծում ենք խոսքային այլ միջավայրեր՝ կազմակերպելով փոքրիկ բակային էքսկուրսիաներ: Աշնան տերևաթափի ժամանակ այցելում ենք այգի՝ հավաքելու չորացած տերևներ, կոներ, փայտեր, կաղիմներ և ծաղիկներ՝ հետագա մեր աշխատանքները ավելի բազմաբնույթ դարձնելու նպատակով: Այստեղ իրականում բացահայտվում են աշակերտների խոսքային մշակույթի կարողությունները: Ուսուցիչն ավելի ակնհայտ է տեսնում նրանց խոսքային կարողությունները և իր համար եզրահանգումներ է կատարում հետագա աշխատանքի վերաբերյալ:

Հավաքված առարկաները մշակվում են դասարանում, դրանք մինչ օգտագործելը մաքրվում են, այնուհետև խնամքով չորացվում՝ դրվելով գրքերի արանքում:

Բնական միջոցներից բացի աշակերտներին հանձնարարում ենք տեխնոլոգիական դարակներում ունենալ նաև գունավոր թղթեր, թելեր, կտորներ, ներկեր, ինչպես նաև գործիքներ՝ տարբեր տեսակի քանոններ, մատիտ, ռետին, սոսինձ, մկրատ, ասեղ, գնդասեղ, գրիչներ, ամրակներ, կարկին և այլն: Վերջիններս կիրառվում են նաև մաթեմատիկայի դասերին: Աշխատասիրությանը զուգահեռ կատարելով խոսքի զարգացում՝ պահանջում ենք, որ աշակերտները կարողանան անվանել յուրաքանչյուր առարկա և բացատրել դրանք՝ ներկայացնելով գործառույթները և արտաքին հատկանիշները: Այս դեպքում խրախուսվում են այն աշակերտները, որոնք կարողանում են իրենց կատարած աշխատանքը ներկայացնել որոշակի հաջորդականությամբ և տրամաբանությամբ, ինչպես նաև մեկնաբանել իրենց ընկերոջ կատարած աշխատանքը՝ ներկայացնելով առավելությունները և բացթողումները, որոնք հետագայում փորձում են շտկել ընկերների օգնությամբ՝ կարևորելով խմբային ընկերական աշխատանքի էությունը:

Տարբերակելով բնական և արհեստական նյութերը՝ աշակերտները հասկանում են, որ դրանք զուգահեռ կիրառելով են ստացվում գեղեցիկ պատկերներ, ինչպես՝ չորացած տերևները սոսնձով կպցնելուց հետո են դառնում կենդանիներ և թռչուններ:

Արհեստական իրերից առաջարկվում է աշխատանք կատարել նաև փրփրապլաստով: Այս բառը նույնպես նորահայտ է աշակերտների համար, և նրանք այդ բառը հասկանում են միայն առարկան տեսնելուց հետո՝ գիտակցելով, որ այն կազմված է *փրփուր* և *պլաստ* բառադարձիչներից: Հայաշունչ և օտարաշունչ բառադարձիչների միավորումից ստեղծվել է նոր բառ, այսպես է նաև կյանքում. տարբեր երևույթների միավորումից ստեղծվում են տարբեր առարկաներ:

Զարգացնելով աշակերտների ոչ միայն խոսքը, այլ նաև ձեռքի աշխատանքը, նրանք սովորում են ճիշտ բռնել գրիչը, մկրատը, ասեղը, երկու ձեռքով աշխատել քանոնով և մատիտով և այլն:

Տառուսուցմանը զուգահեռվում է սերմերով աշխատանքը, այստեղ առաջարկվում ենք աշակերտներին տեղեկացնել սերմերի մասին և հանձնարարել գեղեցիկ ապլիկացիաներ պատրաստել իրենց ունեցած սերմերով՝ խորհրդանշելով հայոց այբուբենի տառերը: Ինքնաստեղծ տառապատկերները մնում են աշակերտների հիշողության մեջ, և նրանք խոսքի զարգացմանը զուգահեռ սովորում են աշխատել ու ցուցադրել իրենց կատարած աշխատանքը:

Տեխնոլոգիայի դասերին աշխատանքի հիմնական միջոցը թուղթն է, որի տեսակներին աշակերտները ծանոթանում են ավելի ուշ: Նրանք ներկայացնում են իրենց հայտնի թղթերի առանձնահատկությունները՝ դրանք բնութագրելով *գրելու, տեսքի, գունավոր* որոշիչներով: Սրանց զուգահեռ ներկայացվում է նաև սովորաթուրք՝ որպես ավելի հաստ թուղթ՝ կազմված *ստվար* և *թուղթ* բառերից: Այսպիսով բառակազմական վարժությունները Այբբենարանի շրջանակներից անցնում են մյուս առարկաներին: Իբրև գործնական աշխատանք՝ հանձնարարվում է թղթերով պատկերել օրիգամիներ՝ անվանելով դրանք: Այստեղից մենք սկսում ենք կիրառել նախագծման մեթոդը: Խմբավորելով դասարանը՝ հանձնարարում ենք պատրաստել բնանկարային կոմպոզիցիաներ՝ յուրաքանչյուր դասին սովորաթղթե պաստառին ավելացնելով նոր առարկա:

Առաջին կոմպոզիցիան անվանում ենք «Բացատում», որի համար նախապատրաստում ենք կանաչ ու կապույտ գույներով ներկված սովորաթղթեր: Այստեղ աշակերտները սոսնձում են սունկի, եղևնու, արևի, շնիկի, հավիկի, ծաղիկների, նապաստակների օրիգամիներ: Երկրորդ կոմպոզիցիան անվանում ենք «Ծովում», որն աշակերտները պատկերում են ձկներով և նավակներով: Երրորդ կոմպոզիցիան անվանում ենք «Նոր տարի», այս գունագեղ պաստառը աշակերտները զարդարում են եղևնիներով և գունավոր շղթաներով, օդապարուկներով, իրենց սովորած տառերով, բառերով ու վանկերով, որոնք դասամիջոցներին միմյանց կապակցելով՝ նրանք հետաքրքիր բառեր ու նախադասություններ են կազմում:

Բնապատկերային կոմպոզիցիաներից հետո սկսում ենք պատրաստել բացիկներ՝ «Ծաղիկներ» անվանումով: Այս ընթացքում աշակերտները սովորած են լինում տառերի հիմնական մասը և կարողանում են համառոտ գրառումներ կատարել՝ դրանք նվիրելով իրենց ծնողներին ու սիրելիներին:

Խոսքի և գործի անընդհատ և գիտակցված համադրումը ուսուցանում է աշխատանքային գործընթացի կազմակերպման, աշխատանքի բաժանման, աշխատանքի որակի, ռիթմի, աշխատանքային գործունեության ոլորտների առանձնահատկությունները: Իմանալով ուսումնական ծրագրում նախատեսված նյութերի, օգտագործվող գործիքների, հարմարանքների անվանումները և նրանց հատկությունները՝ աշակերտները կարողանում են պահպանել անվտանգ ու գեղեցիկ աշխատանքի կանոնները, որոնք, լինելով աշակերտի արժեքային համակարգի կարևոր դրույթներից, դաստիարակում

են հաղորդակցական և կազմակերպչական հատկություններ, աշխատասիրություն, նպատակասլացություն, պատասխանատվություն և մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունք:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Աշխատանքային գործունեության ընթացքում համադրելով առարկայական տարբեր ծրագրերը՝ առաջնորդվում ենք կառուցողական կրթության հիմունքներով՝ կիրառելով ինչպես փոխներգործուն և ֆիզիկական միջոցներ, այնպես էլ չմշակված նախնական տվյալներ և սկզբնաղբյուրներ: Դասավանդման կառուցողական մոտեցմամբ իրական աշխարհի բազմազան հնարավորություններն սկսում ենք աշակերտներին ներկայացնել միջառարկայական կապերի շրջանակներում «Այբբենարան» և «Տեխնոլոգիա» դասագիրք-տետրերի համադրությամբ:

Խոսքի և գործի անընդհատ և գիտակցված համադրումը ուսուցանում է աշխատանքային գործընթացի կազմակերպման, աշխատանքի բաժանման, աշխատանքի որակի, ռիթմի, աշխատանքային գործունեության ոլորտների առանձնահատկությունները: Իմանալով ուսումնական ծրագրում նախատեսված նյութերի, օգտագործվող գործիքների, հարմարանքների անվանումները և նրանց հատկությունները՝ աշակերտները կարողանում են պահպանել անվտանգ ու գեղեցիկ աշխատանքի կանոնները:

Հիմնաբառեր. արժեքային համակարգ, առարկայական ծրագրեր, լեզվամրաձողություն, նկար պատմություն, խոսքի զարգացում, կիրառական արվեստ, աշխատասիրություն, նպատակասլացություն, պատասխանատվություն:

РАЗВИТИЕ ЛИНГВОМЫШЛЕНИЯ УЧЕНИКА В КОНТЕКСТЕ КУРСОВ “ТЕХНОЛОГИЯ” И “БУКВАРЬ”

Варданын Анаит

Одной из важнейших предпосылок создания ценностной системы учащихся является наличие “коммуникативных и организационных качеств, трудолюбия, целеустремленности, ответственности и уважительного отношения к людям”, что предполагает обязательную, интегративную и исследовательскую образовательную систему.

В процессе нашей рабочей деятельности, сочетая разные предметные программы, руководствуемся принципами конструктивного обучения, используя как взаимодействующие и физические средства, так и необработанные предварительные данные и первоисточники. Возможности реального мира по конструктивной модели преподавания представляем учащимся в рамках межпредметных связей в сочетании учебников-тетрадей “Букварь” и “Технология”.

Непрерывное и сознательное сочетание слова и дела обучает особенностям организации рабочего процесса, разделения труда, качества работы, ритма, рабочей деятельности. Зная названия используемых инструментов, атрибутов, предусмотренных учебными программами, учащиеся смогут соблюдать правила безопасной и слаженной работы.

Ключевые слова: ценностная система, предметные программы, лингвомышление, рисунок-история, развитие речи, прикладное искусство, трудолюбие, целеустремленность, ответственность.

DEVELOPMENT OF PUPIL’S LINGUISTIC THINKING IN THE CONTEXT OF "ALPHABET" AND "TECHNOLOGY" COURSES

Vardanyan Anahit

One of the most important preconditions for developing the student’s value system is having "communicative and organizational qualities, diligence, purposefulness, responsibility and respectful attitude towards people", which implies compulsory, integrative and exploratory educational system.

During our work, by combining different subject programmes, we are guided by the principles of constructive education, using both interactive and physical means, as well as raw primary data and source materials. With a constructive approach to teaching, we offer a diverse range of real-world opportunities to students in the context of interdisciplinary communication with the combination of "Alphabet" and "Technology" textbooks and copybooks.

The consistent and conscious combination of speech and work teaches the peculiarities of organizing work process, division of work, quality and rhythm of work, and areas of work process. Knowing the academic names and attributes of materials, tools, gadgets foreseen in the programme, the students are able to maintain safe and beautiful work rules.

Keywords: value system, subject programmes, linguistic thinking, history in pictures, speech development, applied art, diligence, purposefulness, responsibility.

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ Արմեն Ճուղուրյան Նոնա Խաչատրյան

Կարիերայի զարգացման կառավարումը հատկապես կարևորվում է դոկտորանտուրայում: Եթե բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի մասնակիցները առավելապես ուսումնառողներ են, ապա դոկտորանտները դրան զուգահեռ՝ նաև գիտահետազոտական աշխատողներ են, որոնք ձգտում են դեռևս կրթական ծրագրի իրականացման ընթացքում նախանշել իրենց կարիերայի զարգացման ուղին: Գործատուի կողմից կրթության ակադեմիական մասնաբաժինը գերակշռող չի համարվում շրջանավարտի համար: Մասնագիտական գիտելիքներից բացի, չափազանց կարևորվում են աշխատանքային միջավայրում հավասարակշռված, կողմնորոշվելու, հարիր վարքագիծ դրսևորելու, հաղորդակցվելու, ժամանակին և հիմնավոր որոշումներ կայացնելու ունակությունները: Ուստի ներկայումս համալսարանների առջև խնդիր է դրվում վերանայելու կրթական ծառայությունների մատուցման ուղղությունները այնպես, որ դրանով ամրապնդվի «գործատու-բուհ» կամուրջը, և հաշվի առնվեն աշխատաշուկայում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունները:⁷⁸

Դոկտորանտուրայում կրթության առանձնահատկություններից է ուսումնառության երկարաժամկետությունը: Երեքից չորս տարվա կրթությամբ դոկտորի պատրաստման ընթացքում աշխատաշուկայում էական փոփոխություններ են տեղի ունենում, և ուսանողի համալսարան «մուտքից-ելք» ժամանակահատվածում որոշակիորեն «հնանում են» ուսումնական ծրագրերը: Նման իրավիճակներում աշխատանք գտնելու հնարավորությունը բուհի շրջանավարտների համար ընդլայնվում է, երբ համալսարանները կիրառում են «խնամակալների ինստիտուտը»:

Բուհերը պետք է շահագրգիռ լինեն գործատուների՝ կրթական ոլորտին մասնակցության հարցում և նախաձեռնող լինեն, որ վերջիններս ավարտական կուրսերում ընտրեն լավագույն ուսանողներին՝ հետագայում աշխատանք առաջարկելու նպատակով: Գործատուն, քաջատեղյակ լինելով մասնագետների պատրաստման գործընթացին, պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերի ոչ միայն ուսումնական ծրագրերի բարելավման գործում, այլև իր «ներկայությունն» ապահովվի կրթական ծառայությունների ոլորտում: Դրա իրագործման հնարավոր ճանապարհներն են՝ գործատուների կողմից լավագույն ուսանողներին խրախուսական կրթաթոշակների նշանակումը, պրակտիկաների կազմակերպումը, համալսարաններում պրոֆիլային ուսումնական ստուդիաների և ուսուցման կենտրոնների ձևավորմանը աջակցումը:

Մյուս կողմից, գործատուները աստիճանաբար գիտակցում են, որ առավել արդյունավետ է իրենց բաժնեմասով ռեսուրսներ ծախսել համալսարաններում կրթական ծրագրեր իրականացնելիս, քան գնալ աշխատանքի ընդունված բուհի շրջանավարտների վերապատրաստման ճանապարհով: Օգտվելով նման իրավիճակից, դոկտորանտուրայի շրջանավարտը պետք է սերտորեն համագործակցի գործատուների հետ, նպատակ ունենալով աշխատանքի անցնելու կրթությունն ավարտելուց անմիջապես հետո:

Մագիստրատուրայի շրջանավարտը, դեռևս որպես դոկտորանտուրայի դիմորդ հանդես գալով, պետք է համոզմունք ունենա, որ տվյալ մասնագիտության գծով պահանջված է լինելու աշխատաշուկայում: Այս առումով, Բոլոնիայի գործընթացի ներկա փուլում էապես ուշադրություն է դարձվում ուսումնառության թիրախավորված վերջնարդյունքներին կրթության կազմակերպմանը, երբ կրթությունը ամբողջովին հասցեագրվում է աշխատաշուկայի պահանջներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս⁷⁹, որ ԲԿԵՏ տարածքում բարձրագույն մասնագիտությամբ շրջանավարտների գործազրկության շարժառիթների շարքում, տնտեսական ճգնաժամներից բացի, կարևոր պատճառ կարող է հանդիսանալ ուսումնառությամբ ընթացքում մասնագետի հմտությունների և կարողությունների անհապատասխանությունը՝ գործատուի պահանջներին: Այս ա-

⁷⁸ Ն. Խաչատրյան, Մասնագիտական կրթության էկոնոմիկա, «Էդիթ Պրինտ», Եր. 2010, էջ 26:

⁷⁹ The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 171-173.

ռումով, համալսարանները պետք է ձգտեն հնարավորինս ուսումնառության վերջնարդյունքներն ուղղորդել մասնագետի այն հմտություններին և կարողություններին, որոնք պահանջվում են մասնագիտական կրթական բարձր մակարդակներում:

Եվ խնդիրը միայն այն չէ, որ շրջանավարտ մասնագետը կարող է չունենալ բավարար հմտությունների կամ կարողությունների ընդգրկուն շրջանակ, և դրանով իսկ, պահանջված չլինել գործատուի կողմից: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ կրթության ընթացքում ձեռք բերած մասնագիտական հմտությունների լայն շրջանակը չի բավարարում գործատուին, քանի որ այն երբեմն «գերհագեցած է» և որոշակիորեն կիրառելի չէ աշխատանքի ընթացքում: Եվ ստացվում է այնպես, որ այդ պարագայում դոկտորանտուրայի շրջանավարտները գործատուների կողմից գնահատվում են «գերորակավորված» և արդյունքում աշխատանքի չեն անցնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արևմտյան Եվրոպայի համալսարանական գործազուրկ շրջանավարտների շրջանում գործատուի համար «գերորակավորում» ունեցող երիտասարդ մասնագետների տեսակարար կշիռը տատանվում 14-35% միջակայքում:⁸⁰

Այս առումով հետաքրքիր լուծումներ են առաջարկվում Շվեդիայի համալսարաններում: Այսպես, Ստոկհոլմի Թագավորական տեխնոլոգիական համալսարանում դոկտորանտուրան կազմակերպվում է երկու փուլով: Առաջին փուլի շրջանավարտները, որոնք սովորում են երկու տարի, ստանում են դոկտորի առաջին աստիճանի գիտական կոչում և կարող են մաիայն աշխատել ինդուստրիալ շուկան սպասարկող գիտահետազոտական կառույցներում: Սակայն, եթե նրանք ցանկանում են դասավանդել և հետազոտական աշխատանք կատարել համալսարաններում, ապա ևս երկու տարի պետք է սովորեն դոկտորանտուրայում, պաշտպանեն ատենախոսություն և ունեն դոկտորի ավելի բարձր որակներ:

Հայաստանի Հանրապետությունում աշխատաշուկային միտված դոկտորանտուրայի կազմակերպման նման ճկունություն չի ցուցաբերվում: Ավելին, ըստ պաշտոնական վիճակագրության, վերջին տարիներին գործազուրկների մեջ առավել մեծ թվաքանակ են զբաղեցնում բարձրագույն կրթությամբ անձինք (տես աղյուսակ 2), որոնք ունեն կրթական ցենզի բարձր մակարդակ և իրենց մասնագիտական հմտությունների ու կարողությունների որակով գերազանցում են գործատուների պահանջմունքների մակարդակը, և վերջիններիս կողմից գնահատվելով «գերորակավորված», պարզապես աշխատանքի առաջարկ չեն ստանում:

Աղյուսակ 1

ՀՀ-ում գործազուրկներն՝ ըստ կրթական ցենզի (հազ. մարդ)⁸¹

Կրթական ցենզը	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2015	2016	2015	2016	2015	2016
Ընդամենը	243.7	220.2	120.4	116.9	123.3	103.3
Բարձրագույն, հետբուհական	67.8	60.6	27.1	29.2	40.7	31.4
Միջին մասնագիտական	59.7	49.2	22.8	20.1	36.9	29.2
Նախամասնագիտական	6.4	8.1	4.3	5.9	2.1	2.2
Միջնակարգ	99.7	92.5	58.2	54.6	41.4	37.9
Հիմնական	9.8	9.4	7.6	7.0	2.1	2.5
Տարրական	0.4	0.3	0.4	0.2	0.0	0.1

Այս առումով, կարծիք է հայտնվում, որ չնայած ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի որոշակի ձեռքբերումներին, իրականացված բարեփոխումները հիմնականում դեռևս առնչվում են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական

⁸⁰ The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 182.

⁸¹ ԱՎԾ Տարեգիրք, 2017, էջ 72:

ծրագրերի բովանդակությանը և որակին:⁸² Դրանք, իրենց հերթին բերում են նրան, որ կրթական համակարգը, ընդհանուր առմամբ, դեռևս շարունակում է «կտրված» մնալ աշխատուշակայից և ամբողջովին հաշվի չի առնում գործատուների պահանջները: Մասնագիտական կրթական ծրագրերը, հաճախ գերհագեցած են լինում շրջանավարտներից պահանջվող հմտություններին ու կարողություններին ուղղակիորեն չառնչվող դասվանդվող առարկաներով, կամ էլ չեն ընդգրկում արդիական այնպիսի առարկաներ, որոնք կգարգացնեն այսօրվա շրջանավարտի կոմպետացիաները՝ հասցեագրված գործատուի պահանջներին:


Կրթական գործընթացի կազմակերպման հարթությունում ակընհայտ է մարդկային գործունի կարևորությունը: Բազմաթիվ են օրինակները, երբ առկա են բավարար տեղեկատվություն, հնարավորություններ, սակայն ուսանողներն ու դասախոսները չեն օգտվում կամ չեն ցանկանում օգտվել դրանցից: Հետևաբար, համալսարանները հրատապ անցում պետք է կատարեն ուսումնառության վերջնարդյունքների հենքով կրթության կազմակերպմանը, մասնագիտական կրթական ծրագրերում հստակ նշելով՝ թե որ առարկան ի՞նչ չափով և ինչպե՞ս է առնչվում շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

Այս ճանապարհով հնարավոր կլինի բեռնաթափվելու ուսումնական ծրագիրը գերծանրաբեռնող «անուղղակի» առարկաներից՝ փոխարենը ուսումնառության գործընթացում ընդգրկելով աշխատաշուկայի պահանջարկը բավարարող վերջարդյունքներով նոր առարկաներ: Ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումը աշխատաշուկայի պահանջներին մեծապես կբարձրացնի մասնագիտական կրթական համակարգում բարեփոխումների արդյունավետությունը:

Կարևոր ցուցանիշ է համարվում նաև բուհն ավարտելուց հետո շրջանավարտի՝ աշխատանք գտնելու տևողությունը, որը ԲԿԵՏ-ում միջինը կազմում է շուրջ 4 ամիս և ըստ երկրների ունի հետևյալ բաշխվածությունը (գծապատկեր 2):

Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական բարձրագույն կրթության երրորդ աստիճանի շրջանավարտները հիմնականում իրենց կարիերայի աճը տեսնում է համալսարանական համակարգում, համալրելով բուհերի պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարքերը: Նրանց փոքր մասն ատենախոսության պաշտպանությունից հետո շարունակում կարիերիայի աճը գիտահետազոտական կառույցներում կամ պետական գերատեսչական մարմիններում: Պատճառն այն է, որ դեռևս աշխատավարձի տարբերակումը կրթական ցենզերի միջև մեր երկրում այդքան էլ զգալի չէ, և գիտական կոչում ունեցող անձինք նախընտրում են դասախոսական աշխատանքը:

Սակայն, միջազգային շուկայում շրջանավարտ դոկտորները չեն խուսափում արդյունաբերական շուկայում աշխատանքի անցնելուց, քանի որ այնտեղ գործատուների կողմից գնահատվում է նրանց առաջնորդության մասնագիտական հմտությունները:



Գծապատկեր 2 Համալսարանն ավարտելուց հետո շրջանավարտների աշխատանքի անցնելու տևողությունը (ամիսներ)⁸³

⁸² Գաբրիելյան Մ., Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակարգ, // Բաց հասարակության հիմնադրամ- Հայաստան, էջ 63:

⁸³ Eurodoc Survey I, Descriptive Report, 2009.

Առաջնորդի կարևորության շեշտադրումը ներկայումս ներհյուսվել է գիտության ներքին զարգացմամբ գոյացած հրամայականին: Բնութագրական է, որ տեսաբանների մեծ մասը իրենց եզրակացությունների մեջ պարտադիր ներառում են կառավարչի և առաջնորդի տարբերակման ըմբռնումը: Ըստ սոցիալ-փիլիսոփայական վերլուծության ասպարեզի առաջատար հեղինակների՝ կառավարիչն արդյունավետ է գործում միայն առկա հարացույցի շրջանակներում, նա նույնիսկ կարող է կատարելագործել տվյալ հարացույցին բնորոշ սկզբունքներն ու կանոնները, վարվելակերպի նորմերն ու ստանդարտները, բայց միայն առաջնորդն է, որ ունակ է փոխելու հարացույցը, ապահովելու մի հարացույցից անցումը մյուսին. «Այն իրավիճակներում, որոնք վերափոխում են պահանջում, հաջողության են հասնում առաջնորդները, այլ ոչ թե կառավարիչները»:

Հետևաբար, դոկտորանտուրայի շրջանավարտը աշխատանքային միջավայրում պետք է ցուցաբերի առաջնորդի հմտություններ, ուղղորդելով աշխատողների մեծ կամ փոքր խմբերի թիմային գործունեությունը՝ արդյունավետ կերպով նախանշված արդյունքներին հասնելու համար: Եվ եթե ավանդական կառավարիչը այդ գործընթացը կուղղորդեր է նախօրոք սահմանված կազմակերպչական չափանիշներով և նորմերով, ապա դոկտորի աստիճան ունեցող առաջնորդը այստեղ ստեղծարար մոտեցումներ կցուցաբերեր, փորձելով վերափոխել և զարգացնել թիմային կառավարման գործընթացը, օգտվելով իր մասնագիտության բարձր որակներից: Մասնավորապես, առաջնորդության պարագայում թիմակիցներին կտրամադրվեին սեփական որոշումների կայացման առավել ազատական հնարավորություններ, ստեղծարար աշխատանքի մոտիվացիա, կառավարման ենթակառուցվածքներում՝ ինքնավարության լայն շրջանակ, որոնք ի վերջո կգտնվեն առաջնորդի վերահսկելիության շրջանակում, և առավել արդյունավետ կդրաձնեն ոչ միայն թիմային աշխատանքը, այլև առաջնորդության կազմակերպչական գործընթացը:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Դոկտորանտուրայի շրջանավարտը իր ուսումնառության տարիներին, գիտակրթական հմտություններից բացի, պետք է ձեռք բերի կարիերայի զարգացման կարողություններ, քանի որ մասնագիտական կրթության բարձրագույն աստիճանը հավակնում է աշխատաշուկայում մրցակցային պաշտոնների: Այս առումով, դոկտորանտուրայում առավել սերտ են դրսևորվելու սովորող հետազոտողի փոխհարաբերությունները գործատուների հետ, ինչպես նաև ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումը շրջանավարտի կարիերայի զարգացմանը:

Հիմնաբաներ. դոկտորանտուրա, ուսումնառության վերջնարդյունքներ, կարիերայի զարգացում, շրջանավարտ:

УПРАВЛЕНИЕ РАЗВИТИЕМ КАРЬЕРЫ В ДОКТОРАНТУРЕ

Армен Джугурян Нонна Хачатрян

В дополнение к академическим и исследовательским навыкам, выпускник докторантуры должен приобрести возможности карьерного роста, поскольку последний степень высшего образования находится в крайней конкурентной позиции на рынке труда. В этом аспекте в докторантуре более тесно должны проявиться отношения исследователей с работодателями, а также конкретная направленность обучения на развития карьеры выпускников.

Ключевые слова: докторантура, обучение, развитие карьеры, выпускник.

CAREER DEVELOPMENT MANAGEMENT IN DOCTORIAL STUDY

Armen Jhuguryan Nonna Khachatryan

In addition to academic and research skills, a doctoral graduate must acquire career opportunities, since the degree of post-graduate higher education is in a competitive position in the labor market. In this aspect, doctoral studies should show more closely the relations of researchers with employers, as well as the orientation of training on the

Keywords: doctoral studies, training outcomes, career development, graduate.

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ատոմ Մխիթարյան

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը,⁸⁴ որ ընդունվել է 2000թ. դեկտեմբերին, կարգավորում է գիտական և գիտատեխնիկական գործունեության սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև գիտական արդյունքներն օգտագործողների հարաբերությունները, սահմանում է գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները: Այն սահմանում է, որ գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն է:

Օրենքում օգտագործված հիմնական հասկացությունների թվում սահմանված է, որ գիտական և գիտատեխնիկական գործունեությունը ձեռք բերած գիտելիքների ընդլայնմանը և նոր գիտելիքների ստացմանն ու կիրառմանն ուղղված մտավոր ստեղծագործական գործունեություն է: Ընդ որում հիմնարար գիտական հետազոտությունները բնության օրենքների, մարդու գործունեության, հասարակության կառուցվածքի և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին ունեցած գիտելիքների ընդլայնմանն ու նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գործունեություն է, իսկ կիրառական գիտական հետազոտությունները՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտություններ: Գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականությունը պետության քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտական ու գիտատեխնիկական գործունեության նկատմամբ, որոշում այդ բնագավառում պետական մարմինների գործունեության հիմնական նպատակները, սկզբունքները, ուղղությունները և եղանակները: Գիտական արդյունքը նոր գիտելիքներ կամ լուծումներ բովանդակող ու տեղեկատվության ցանկացած կրիչի վրա գրանցված գիտական գործունեության արդյունքն է, որը կարող է ներդրվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Գիտնականը սահմանվում է որպես գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտ, որն զգալի ներդրում ունի գիտության մեջ, իսկ գիտական կազմակերպությունը, անկախ իր կազմակերպական-իրավական ձևից, հիմնականում իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում է գիտական կադրերի պատրաստմամբ:

Օրենքի հիմնական նպատակը գիտական և գիտատեխնիկական գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորումն է: Ընդ որում, գիտական և գիտատեխնիկական գործունեությունն իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Դրանք են գիտնականները, գիտական աշխատողները, գիտամանկավարժական բնագավառի աշխատողները, գիտական (ներառյալ՝ հասարակական) կազմակերպությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Գիտական կազմակերպության գիտական խորհուրդն այդ կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

Օրենքը սահմանում է նաև գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում կառավարության

⁸⁴ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՕ-119:

իրավասությունները, այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական միասնական քաղաքականության իրականացումը, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների որոշումը, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի հաստատումը, գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի ու չափանիշների հաստատումը, գիտական կադրերի որակավորման կարգի և գնահատման չափանիշների հաստատումը:

Հարկ է ընդգծել, որ գիտության պետական կառավարման խնդիրների թվում օրենքը սահմանում է գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի և չափանիշների մշակումը և գիտական կադրերի որակավորման կարգի և գնահատման չափանիշների մշակումը:

Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրան, օրդինատուրան, դոկտորանտուրան և հայցողների համակարգը: Ասպիրանտուրայում, օրդինատուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը ևս սահմանում է կառավարությունը: Գիտական որակավորման իրավական հիմքերը և չափանիշները սահմանում է կառավարությունը, իսկ դրանց իրականացումն ապահովում է որակավորման պետական համակարգը:

Օրենքով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը՝ գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններով, սահմանված են նաև պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ: Պրոֆեսորի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին հինգ տարիներին զբաղվել են գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեությամբ կամ առնվազն պաշտպանած գիտական հինգ թեզերի ղեկավար են: Դոցենտի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին երեք տարիների ընթացքում բուհական համակարգում իրականացրել են գիտամանկավարժական գործունեություն:

Գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին առընթեր մասնագիտական խորհուրդները, մինչդեռ դրանք հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովը (այժմ՝ կոմիտե⁸⁵)՝ կառավարության սահմանած կարգով:

Գիտական կոչումները շնորհվում են բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների որոշմամբ: Գիտական կոչումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովը (այժմ՝ կոմիտե): Գիտական աստիճանների ու գիտական կոչումների դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը:

Օրենքով ամրագրված է նաև, որ գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման առկայությունը հաշվի է առնվում գիտական աշխատողի կողմից տվյալ գիտական պաշտոնին հավակնելու դեպքում:

ՀՀ-ում երրորդ աստիճանի Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող մյուս գործող օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքն է⁸⁶, որն ընդունվել է 2004 թվականին: Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները: Այստեղ Բարձրագույն կրթության միջազգայնորեն ընդունված երրորդ մակարդակը՝ դոկտորանտուրան (մեզանում՝ ասպիրանտուրա) դիտարկվում է որպես «հետբուհական» կրթություն: Այսպես, սահմանվում է, որ Բարձրագույն մասնագիտական կրթությունն առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթությունն է, իսկ հետբուհական

⁸⁵ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2018 թվականի մարտի 23-ին, ՀՕ-260-Ն, հոդված 9, կետ 3, ենթակետ 24

⁸⁶ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, ՀՕ-62-Ն:

մասնագիտական կրթությունը՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթությունն է: Սա, ինչ խոսք, թյուրիմացություն կարող է առաջացնել հատկապես Բոլոնիայի գործընթացի լույսի ներքո, որտեղ դոկտորանտուրան միանշանակորեն բարձրագույն կրթության ամենաբարձր՝ երրորդ աստիճանն է⁸⁷:

Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձն է, որը հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի որակավորման աստիճան: Օրենքը գործում է ավելի քան տասնչորս տարի, սակայն վերջին դրույթը, ըստ էության, չի գործում. հետազոտողի որակավորում կամ չի տրվում բուհերի կողմից, կամ այն չի ընդունվում որևէ գործատուի կողմից:

Օրենքում ամրագրված է նաև հայցորդի հասկացությունը՝ ինչպես բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը:

Օրենքով է սահմանված նաև կրեդիտային (չափանիշային) համակարգը որպես ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն: Ընդ որում կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ)⁸⁸՝ համակերպական կրեդիտային համակարգը⁸⁸, ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների, այդ թվում՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակի, շարժունակությունը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ հետևյալ կրթական ծրագրերով.

- 1) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով՝
 - բակալավրի,
 - մագիստրոսի (կլինիկական օրդինատորի),
 - դիպլոմավորված մասնագետի.
- 2) հետբուհական մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝
 - հետազոտողի.
- 3) լրացուցիչ կրթական ծրագրերով՝
 - վերապատրաստման,
 - մասնագետների որակավորման բարձրացման:

Ընդ որում, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերը մշակում և հաստատում են բարձրագույն ուսումնական հաստատությունը, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա: Սահմանվում է հետբուհական մասնագիտական կրթության՝ հետազոտողի որակավորման աստիճան, որի ուսուցման տևողությունն առնվազն 3 տարի է: Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստենսատի) ուսուցման ձևերով, որի կարգը

⁸⁷ Հեղինակը հույս է հայտնում, որ բարձրագույն կրթության բարեփոխումների, այդ թվում՝ օրենսդրական, գործընթացը բերելու է նրան, որ օրենքում դոկտորանտուրան ամրագրվի որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան:

⁸⁸ ECTS - European Credit Transfer and Accumulation System. https://ec.europa.eu/education/resources-and-tools/european-credit-transfer-and-accumulation-system-ects_en

սահմանում է կառավարությունը: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթուղթ՝ համապատասխան ներդիրով:

- բակալավրի դիպլոմ,
- մագիստրոսի դիպլոմ,
- բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ,
- հետազոտողի դիպլոմ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ակադեմիական տեղեկանք:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տեսակները:

- 1) համալսարան,
- 2) ինստիտուտ,
- 3) ակադեմիա,
- 4) կոնսերվատորիա և այլն:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում պետական հավատարմագրման ենթակա են բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի և հետբուհական մասնագիտական կրթական բոլոր ծրագրերը: Պետական հավատարմագրման նպատակն է ուսուցման և առանձին մասնագիտությունների գծով շրջանավարտների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումը, ինչպես նաև նպաստելը ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի՝ մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

Ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ծրագրով, դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա, որի կարգը և մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ասպիրանտուրայի ընդունելության դիմումի հետ միասին բարձրագույն ուսումնական հաստատությունը դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդին: Օրինակելի պայմանագրի ձևը հաստատում է կառավարությունը:

Օրենքով ամրագրված է, որ բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողները, ասպիրանտները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կողմից կառավարման մարմինների աշխատանքներին: Յուրաքանչյուր սովորող իրավունք ունի ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները, բացի ընտրած մասնագիտության

ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով, մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին, անվճար օգտվելու բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին: Սովորողն իրավունք ունի նաև բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները, օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից, ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ, ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ, հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ, փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու խրախուսանք:

Կրթությունը ընդհատած նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները: Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: Ասպիրանտուրայում պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետները պարտավոր են առնվազն երեք տարի աշխատել բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում: Ընտրված գիտական թեմաների, գիտական հետազոտությունների հետ կապված աշխատանքների կատարման համար ասպիրանտները, հայցորդները և դոկտորանտները բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գիտամանկավարժական և գիտական աշխատողների հետ հավասարապես օգտվում են լաբորատորիաներից, սարքավորումներից, ուսումնամեթոդական կաբինետներից, գրադարաններից, ինչպես նաև գործուղումների իրավունքից:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունների շրջանակներում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգի հաստատումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի հաստատումը, կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի հաստատումը, ըստ հիմնական կրթական ծրագրերի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի հաստատումը, ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտների և հայցորդների ձևակերպման կարգի հաստատումը, ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը, բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգի սահմանումը,

բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ընդհանրական բնութագրերի և ցանկերի՝ հաստատումը, ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը:

Այս ոլորտում լիազորված մարմնի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, իրավասությունների շրջանակում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի մշակումն ու հաստատումը՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների, ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգերի մշակումը, մասնագետների պատրաստման, աշխատողների և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ներկայացումը, բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի հաստատումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ, ուսումնական հաստատության որակի գնահատում և հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով: Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը:

ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում, ուսուցման կազմակերպման, ինչպես նաև գիտական աստիճանաշնորհման համակարգի իրավական հիմքերը ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներում⁸⁹: Ուստի, այս ոլորտում բարեփոխումների (որոնց մասին արդեն քննարկումներն առկա են որոշում կայացնողների մակարդակում) ու դրանց իրավական ամրագրման մասին խոսելիս պետք է, անշուշտ, սկսել հենց օրենքներից: Ինչպես տեսանք, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ բարձրագույն կրթության որակավորման համակարգը երկաստիճան է՝ բակալավր և մագիստրոս (հոդված 5): Ասպիրանտուրան ավելի քան տասը տարի գործող օրենքում համարվում է հետբուհական կրթություն, չնայած՝ իրականացվում է հիմնականում հենց բուհերում: Մեր կարծիքով, հենց օրենքում անհրաժեշտ է ամրագրել, որ դոկտորանտուրան (այժմ՝ ասպիրանտուրա) բարձրագույն կրթության երրորդ աստիճանն է, միաժամանակ, հրաժարվելով «հետբուհական» բառից: Մեկ այլ կարևոր հանգամանք՝ օր առաջ հարկավոր է փոխել օրենքում «հետազոտողի որակավորում» սահմանումը: Դա որակավորման աստիճան է, որ պիտի տրվեր «հետազոտողի» կրթական ծրագրով ուսանողներին՝ ծրագիրն հաջողությամբ ավարտելուց հետո (հոդված 8, հոդված 9): Սակայն անցած ավելի քան տասը տարվա ընթացքում, ստացվում է, օրենքն ըստ էության չի գործել. համալսարանները կամ հետազոտողի որակավորում չեն տվել, կամ՝ այն որևէ գործատուի, այդ թվում և հենց համալսարանների մոտ որևէ նշանակություն չի ունեցել և դեռևս կիրառելի չէ: Այսպիսով, ինչպես Բոլոնիայի գործընթացն է մեզ հուշում և ինչպես արևմտյան երկրներում է՝ բարձրագույն կրթության երրորդ աստիճանն ավարտելիս պետք է շնորհել դոկտորի (մեզ մոտ՝ գիտությունների թեկնածուի) գիտական աստիճան՝ ատենախոսության պաշտպանության արդյունքում:

⁸⁹ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՕ-119:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2018 թվականի մարտի 23-ին, ՀՕ-260-Ն:

Օրենքում ամրագրված մյուս չգործող ինստիտուտը դոկտորանտի ինստիտուտն է՝ «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձը» (հոդված 3): Ըստ էության սա նախկինից մնացած, օրենքում ամրագրված, սակայն այժմ որևէ կերպ չօգտագործվող ինստիտուտ է: Առավել ևս, երբ գիտական առաջին աստիճանը ստանա «դոկտոր» անունը, ինչպես երաշխավորում է UNESCO-ն⁹⁰, բարձրագույն կրթության երրորդ աստիճանը տրամաբանորեն կարելի է անվանել «դոկտորանտուրա»՝ «ասպիրանտուրայի» փոխարեն: Գիտական երկրորդ՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտություն չկա կրթական որևէ ծրագիր իրականացնել, առավել ևս, որ այժմ էլ ոչ ոք դրա կարիքը չի զգում: Ավելին, գիտական երկրորդ աստիճանը ուղղակի կապ չպիտի ունենա կրթության հետ, դա զուտ գիտական, հետազոտական աշխատանքի արդյունք է, ուրույն ներդրում, ավանդ գիտության որոշակի բնագավառում: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հավակնորդը, թերևս, պետք է բավարարի միայն մեկ պայմանի՝ ունենա գիտական առաջին՝ դոկտորի աստիճան:

Օրենքում ամրագրված հիմնական հասկացություններից հաջորդը, որը ևս հեղինակի կարծիքով պետք է չլինի, հայցորդն է՝ «բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձը, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը» (հոդված 3): Սա Հայրենական Մեծ պատերազմից հետո ԽՍՀՄ-ում ներդրված ինստիտուտ էր, որ պետք է ծառայեր որպես գիտական կադրերի պատրաստման ժամանակավոր միջոց՝ առաջացած բացը լրացնելու համար: Մինչդեռ, այն դեռևս մնալով մեր գիտակրթական համակարգում՝ ավելի շատ ծառայում է որպես գիտության ոլորտի հետ որևէ ուղղակի կապ չունեցող անհատների համար գիտական աստիճան ձեռք բերելու հեշտ միջոց: Պատճառներից մեկը, թերևս դա է, որ ՀՀ ԿԳՆ ԲՈԿ ներկայացվող ատենախոսությունների զգալի մասն անորակ է: Հայցորդության համակարգը հեշտությամբ կարելի է փոխարինվել հեռակա դոկտորանտուրայով (ասպիրանտուրա): Համակարգային բարեփոխումների լույսի ներքո էական փոփոխությունների կարիք ունի Հայաստանի Հանրապետությունում աստիճանաշնորհման ողջ համակարգը, որը կարելի է ամրագրել, թերևս, առանձին օրենքով:

Բերենք օրենսդրական կամ ենթօրենսդրական այն հայեցակարգային հիմնական դրույթները, որոնք, մեր կարծիքով, հստակեցման կամ փոփոխությունների կարիք ունեն:

Ատենախոսությունների պաշտպանության համար պահանջվում է նախապես առնվազն վեց գիտական հոդված ունենալ ԲՈԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում կամ առնվազն մեկ գիտական հոդված ունենալ web of science կամ scopus միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում ու այդ դեպքում կպահանջվի ևս երկու տպագրված հոդվածի առկայություն: Ընդ որում, այս պահանջը ունիվերսալ է ու տարածվում է բոլոր մասնագիտություններով պաշտպանվող ատենախոսությունների վրա: Եթե բնագիտության՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մեխանիկայի կամ մաթեմատիկայի բնագավառներում միջազգային շտեմարաններում ընդգրկված ու որոշակի ազդեցության գործակից ունեցող գիտական պարբերականներում հոդված ունենալը մեծ խնդիր չէ, ապա նույնը չի կարելի ասել հումանիտար ու հասարակագիտական բնագավառում պաշտպանության ներկայացվող ատենախոսությունների համար: Առաջադրվող պահանջը շատ կարևոր է, և անշուշտ, նպաստում է հայրենական գիտության միջազգային ճանաչմանն ու ազդեցության աճին: Սակայն, ցավոք, մյուս կողմից, շատ են հայկական գիտական պարբերականներն ու շատ ցածր է դրանց ազդեցության մակարդակը: Անհրաժեշտություն կա օրենսդրորեն կարգավորելու նաև հայկական գիտական պարբերականներին ներկայացվող պահանջները այնպես, որ բարձրանա արհեստավարժության մակարդակը, ամրապնդվի գիտականությունն ու դուրս գա արհեստականությունը: Ցանկալի է ստեղծել գիտական հրատարակությունների ազգային գրանցամատյան, մշակել ու իրականացնել գիտական ամսագրերի ու ժողովածուների ուժեղացման քաղաքականություն, խրախուսել դրանց ընդգրկումը միջազգային շտեմարաններում: Նշենք, որ այս հարցն օրախնդիր է հատկապես հայագիտության համար, որի միակ ու հիմնական աջակիցը պետք է հայոց պետությունը լինի:

⁹⁰ <http://www.uis.unesco.org/Education/Documents/isc2011en.pdf>

Հետաքրքիր է, որ Հայաստանն այն փոքրաթիվ երկրների շարքում է, որտեղ ատենախոսությանը զուգահեռ պարտադիր է ունենալ սեղմագիր, որը պետք է արտացոլի ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ընդ որում, սեղմագիրը պետք է հրապարակվի համապատասխան բուհի կամ գիտական կազմակերպության կայքում: Սա լավ հնարավորություն է երկրի գիտական նորությամբ մեկտեղելու ու համակարգված ներկայացնելու համար, առավել ևս, որ սեղմագրերի պարզայում, ի տարբերություն ատենախոսությունների, հեղինակային իրավունքի խնդիրներ չեն կարող առաջանալ, դրանք տպագրվում են առնվազն 50 օրինակով ու տարածվում մասնագետների շրջանում, տրամադրվում գրադարաններին ու մասնագիտական կազմակերպություններին: Այստեղ, թերևս, սեղմագրերի թարգմանության ու օտար լեզվով (անգլերենով) միջազգային հանրությանը ներկայացնելու խնդիրն է կարևորվում: Խնդրի լուծումը կարելի է տալ պետականորեն ֆինանսավորվող առանձին ոչ մեծ ծրագրով, որի իրականացումը, մի կողմից, կնպաստի հայ գիտնականների ու հայրենական գիտական արդյունքի միջազգայնացմանը, մյուս կողմից՝ այդքան տարածված գրագողության կանխմանը:

Մշտական գործող մասնագիտական խորհուրդները նախկինից մնացած, ատենախոսությունների պաշտպանությունը կազմակերպող ու իրենց, կարելի է ասել, սպառած օղակներ են: Աստիճանաշնորհման խորհրդային համակարգը ժառանգած գրեթե բոլոր երկրները հրաժարվել են 1-2 տասնյակ անդամ ունեցող մասնագիտական խորհուրդների «ծառայություններից», իսկ արևմտյան երկրներում արդյունավետորեն գործում են 3-5 հոգանոց մասնագիտական խմբերը, որ ձևավորվում են կոնկրետ պաշտպանությունը կազմակերպելու համար: Մեզանում ևս օր առաջ անհրաժեշտ է հրաժարվել ոչ արդյունավետ, մշտապես գործող մասնագիտական խորհուրդներից և փոխարենը յուրաքանչյուր պաշտպանության համար կազմավորել փոքր մասնագիտական խմբեր՝ դրանցում ընդգրկելով մասնագետներ արտասահմանից: Ասենք, որ վերջին շրջանում նույնիսկ Ռուսաստանում են սկսել կազմակերպել «արևմտյան տիպի» պաշտպանություններ: Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում, օրինակ, ատենախոսության պաշտպանության համար ստեղծվում է յոթ հոգանոց խումբ, որում առնվազն երկուսը նույն համալսարանից են, առնվազն երկուսն արևմտյան մասնագետներ էլ՝ Ռուսաստանի այլ, նաև արտասահմանյան համալսարաններից: Ընդ որում, այսպիսի պաշտպանությունների արդյունքում ատենախոսին շնորհվում է ոչ թե գիտությունների թեկնածուի (кандидат наук), այլ դոկտորի (PhD) գիտական աստիճան:

Նշված հայեցակարգային առաջարկությունները օր առաջ կյանքի կոչելու համար անհրաժեշտ է մասնագիտական քննարկումների արդյունքում մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, ներկայացնել Ազգային Ժողով:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտը, որ կարգավորում է բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ու գիտական աստիճանաշնորհման համակարգի հարցերը: Վեր են հանվում օրենքների թերի կողմերը, ներկայացվում այս բնագավառի միջազգային փորձը: Հայեցակարգային առաջարկություններն ուղղված են դոկտորանտուրայի, մասնագիտական խորհուրդների, գիտական պարբերականների գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի կատարելագործմանը, միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը:

Հիմնաբաներ. ասպիրանտ, դոկտորանտուրա, բարձրագույն կրթություն, գիտական աստիճանաշնորհման համակարգ, գիտական պարբերական, ատենախոսություն:

LEGISLATIVE FRAMEWORK ISSUES OF DEGREE AWARDING SYSTEM IN ARMENIA

The article presents the current legislative framework in the Republic of Armenia that regulates issues of tertiary education and academic degree awarding system. The shortcomings of the laws are raised and the international experience of this field is presented. Author's conceptual recommendations are aimed at improving the legislative framework required for the functioning of doctorate, professional councils for defence, scientific journals, and conforming to international standards.

Keywords: PhD, doctorate, higher education, academic degree awarding system, scientific periodical, scientific thesis.

ПРОБЛЕМЫ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ БАЗЫ ПРИСУЖДЕНИЯ УЧЕННЫХ СТЕПЕНЕЙ В АРМЕНИИ

В статье представлена действующая законодательная база в Республике Армения, которая регулирует вопросы высшего образования на третьем уровне и системы присуждения ученых степеней. Выявлены недостатки законов и представлен международный опыт в этой области. Концептуальные рекомендации направлены на совершенствование законодательной базы, необходимой для функционирования аспирантуры, специализированных советов, научных журналов и идентификации международным стандартам.

Ключевые слова: аспирант, докторантура, высшее образование, система присуждения ученых степеней, научная периодика, диссертация.

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ Նարինե Սարգսյան

Ֆինանսական միջնորդության համակարգում ՀՀ առևտրային բանկերը առանցքային դերակատարում ունեն։ Անգամ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին ՀՀ-ում գործող առևտրային բանկերը փոքր-ինչ նվազեցնելով շահութաբերությունը, այնուամենայնիվ գործունեության կայունություն ցուցաբերեցին։ Ներկայումս հանրապետությունում դիտարկվում է բանկային կապիտալի խոշորացում, կապիտալի որակական կազմի բարելավում, նպատակ ունենալով դիմակայելու ոչ միայն բանկային գործունեության ավանդական, այլև համակարգային ռիսկերին և արտաքին շուկաներում ձևավորվող անբարենպաստ միջավայրային փոփոխություններին։

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ՀՀ-ում գործող առևտրային բանկերի կողմից իրականացվող ֆինանսական միջնորդության աճ է նկատվում։ Այսպես, կայուն աճ է արձանագրվում բանկային ակտիվներ/ՀՆԱ, փողի զանգված/ՀՆԱ ցուցանիշների գծով, ակտիվանում են վարկային գործառնությունների ծավալները։ Բնականաբար, ստեղծված իրավիճակում կարևորվում են նաև ֆինանսական միջնորդությանը առաջադրվող որակի և կայունության ապահովման պահանջները։ Իսկ ՀՀ-ում ֆինանսական միջնորդություն ապահովող ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում առևտրային բանկերին (շուրջ 89,7%), նաև փոքր չափաբաժնով (շուրջ 7,3 %)՝ վարկային կազմակերպություններին։ Սկսած 2003 թվականից՝ Հայաստանի բանկային համակարգի ակտիվներն աճել են աճի երկնիշ տեմպերով՝ տարեկան 20-40 տոկոս։⁹¹

«ԱՌԿԱ» գործակալության վարկանիշի համաձայն՝ ակտիվների տնօրինման ցուցանիշով առաջատարների հնգյակում ներառվել են Ամերիա բանկը, Հայբիզնեսբանկը, Արդշինբանկը, ԱկբաԿրեդիտ Ագրիկոլ բանկը, Բենեկոբանկը (տես աղյուսակ 1.)։ Ընդ որում ամենամեծ բանկի ակտիվները 2017 թ.-ին՝ 2016 թվականի նկատմամբ նվազել են 5%-ով։ (տես աղյուսակ 1.)։ Միաժամանակ, այդ նույն ժամանակահատվածում էապես նվազել են ՎՏԲ բանկի և Անելիք բանկի ակտիվները։ Ընդհանուր առմամբ, բացառությամբ վերոնշյալ առևտրային բանկերի 2017 թվականին՝ 2016 թվականի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ակտիվներում աճ է նկատվել։

Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո առևտրային բանկերի առջև գործունեության ֆինանսական կայունության գծով որակական նոր պահանջներ դրվեցին, հիմնականում շեշտադրում կատարելով ոչ թե շահութաբերության աճի, այլ կապիտալի կառուցվածքային բարեփոխումների և ակտիվների կառավարման հայացեկարգի փոփոխությունների վրա։ Դրանով, ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման վեկտորը ուղղվեց ոչ թե բանկային գործունեության շահույթի ձևավորման մրցակազմին, այլ բանկերի ֆինանսատնտեսական կայունության ապահովմանը, հնարավոր ռիսկերի մեղմմանը, կարևորվեց նաև դրամական հոսքերի տեղեկատվության բարելավումն ու վերլուծությունը։

Աղյուսակ 1.

ՀՀ առևտրային բանկերի վարկանիշային սանդղակը՝ ըստ ակտիվների մեծության⁹²

#	Առևտրային բանկեր	12/31/2016 (հազ. դրամ)	12/31/2017 (հազ. դրամ)	%
1	Ամերիաբանկ	719,363,423	677,722,098	-5,79
2	Արմբիզնեսբանկ	404,413,098	574,943,614	42,17
3	Արդշինբանկ	548,409,970	568,272,568	3,62
4	ԱգրաԿրեդիտԱգրիկոլ	283,271,843	311,023,448	9,80

⁹¹ Armenian Banks պաշտոնական կայք, [//www.armbanks.am](http://www.armbanks.am)

⁹² Armenian Banks պաշտոնական կայք, [//www.armbanks.am](http://www.armbanks.am)

5	Ինեկոբանկ	236,196,296	277,842,150	17,63
6	Կոնվերսբանկ	190,993,270	252,735,853	32,33
7	VTB Բանկ	232,671,657	216,060,357	-7,14
8	Արարատ Բանկ	215,560,324	212,601,828	-1,37
9	HSBC Բանկ Արմենիա	215,160,817	208,649,22	-3,03
10	Յունիբանկ	185,396,089	203,220,678	9,61
11	Արմէկոնոմբանկ	146,182,358	190,803,086	30,52
12	Արմավիսբանկ	130,253,135	162,019,724	24,39
13	Արցախբանկ	104,248,485	137,339,017	31,74
14	Անելիք Բանկ	282,453,284	131,931,343	-53,29
15	Էվոկա Բանկ	89,495,432	105,532,464	17,92
16	ԲիբլոսԱրմենիա	64,190,209	85,119,839	32,61
17	Մեյլաթ Բանկ	41,241,653	46,266,115	12,18
	<i>Ընդամենը</i>	<i>4,089,501,343</i>	<i>4,362,083,404</i>	<i>6,67</i>

Բանկային ակտիվների կառավարման և ֆինանսական միջոցադրական գործունեության ռիսկերի մեղմման անհրաժեշտությունը արդիական դարձավ նաև այն առումով, որ վերջին տարիներին ՀՆԱ-ի կազմում ՀՀ տնտեսությունն մեջ տեղաբաշխված վարկերի տեսակարար կշռի եռակի աճ արձանագրվեց: Այսպես, եթե 2009 թվականին վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմում էր 23,4 %, ապա 2017 թվականին՝ արդեն այդ ցուցանիշը աճեց մինչև 47,1% (տես աղյուսակ 2): Իսկ վարկավորման գործընթացի ակտիվացումը պահանջում է ոչ միայն բանկային գործունեության կայունության լրացուցիչ երաշխիքներ, այլև բանկային ակտիվների ճկուն կառավարում, որտեղ առանցքային դերակատարում ունեն դրամական հոսքերի վերահսկողության, հաշվապահական հաշվառման, ներքին աուդիտի և կառավարման գործընթացները:

Աղյուսակ 2

ՀՀ-ում բանկային ակտիվների և վարկերի տեսակարար կշռի փոփոխման միտումները ՀՆԱ-ում (%)⁹³

%	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բանկային համակարգի ակտիվներ / ՀՆԱ	45,1	54,7	61,8	69,0	70,3	68,5	78,7	81,3
Բանկային համակարգի վարկեր / ՀՆԱ	27,4	33,6	40,2	42,1	42,7	39,8	45,8	47,1

Ընդհանուր առմամբ, ՀՀ բանկային համակարգը բնորոշվում է իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովման կայունությամբ: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ակտիվների իրացվելիության նորմատիվային չափաբաժինները միշտ էլ առևտրային բանկերում գտնվել են սահմանված նորմաների սահմաններում և արձանագրել բանկային համակարգի ֆինանսական հավասարակշռություն և ցածր ռիսկայնություն:

Առևտրային բանկերի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցությունը (Ն22 նորմատիվ) վերջին տարիներին գրեթե կրկնակի անգամ գերազանցել է սահմանված չափաբաժինը, և 60% նվազագույն շեմի փոխարեն գտնվել է 120-145%-ի սահմաններում: Նույնը կարելի է ասել բանկերի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցության մասին (Ն2¹ նորմատիվ), որը առևտրային բանկերում վերջին տարիներին պահպանվել է ցանկալի մակարդակում և էականորեն բարձր է սահմանված նորմատիվային չափաբաժնից:

⁹³ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, //cba.am/am/Site pages/panalyticalmarer.aspx

Սակայն դրա հետ մեկտեղ, եթե ՀՀ բանկային համակարգում համաշխարհային ֆինանսատնտեսական տարիներին և դրանից հետո նկատվում է ֆինանսական կայունության ապահովում, ապա զուգահեռաբար դիտարկվում է նաև բանկային գործունեության շահութաբերության անկում (տես աղյուսակ 3.): Այսպես, կապիտալի համարժեքության ցուցանիշը ՀՀ առևտրային բանկերում մշտապես էլ գերազանցել է 12% մակարդակը, և նույնիսկ վերջին տարիներին գրանցվել է այդ ցուցանիշի որակական աճ (մինչև 16%): Նույնը վերաբերում է իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությանը, որոնց նվազագույն 15% շեմի փոխարեն, 2016 և 2017 թվականներին համապատասխանաբար արձանագրվել են 28,7% և 28,4% մակարդակներ: Իսկ այդ նույն ժամանակահատվածում, ՀՀ բանկային համակարգում արձանագրվել է շահութաբերության անկում:

Աղյուսակ 3

Ֆինանսական կայունության 2013-2017 թթ հիմնական ցուցանիշները բանկային համակարգի համար (տոկոսային արտահայտությամբ)⁹⁴

Նորմատիվային ցուցանիշներ	Տարիներ				
	2013	2014	2015	2016	2017
Նորմատիվային ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ	15,2	14,5	16,2	16,4	16.8
Նորմատիվային հիմնական կապիտալ (Tier 1)/ռիսկով կշռված ակտիվներ	12,6	12,7	14,0	14,4	15.2
Զաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր	6,3	7,0	7,8	8,2	7.9
Շահութաբերություն՝ ըստ ակտիվների	1,1	1,0	-0,5	-0,2	0.9
Շահութաբերություն՝ ըստ կապիտալի	6,9	6,4	-3,5	-1,2	0.3
Իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	24,2	25,1	28,0	28,7	28.4

Այսպես, արդեն 2015 և 2016 թվականներին ՀՀ բանկային համակարգում շահութաբերությունը կտրուկ նվազել է, որը առավել ցայտուն է դրսևորվել կապիտալի շահութաբերության գծով (ROE), որը վերջին տարիներին նվազել է անգամ 0-ական շեմից:

Բանկային գործունեության շահութաբերության անկումը պայմանավորված է ոչ միայն սուբյեկտիվ, այլև օբյեկտիվ գործոններով, մասնավորապես՝ արտաքին գործոնների հետ պայմանավորված ազգաբնակչության վարկունակության անկումով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում 2017 թվականին զուտ ընթացիկ մասնավոր դրամական փոխանցումների (12.9%) և հանրապետությունից մեկնող արտագնա աշխատողների զուտ վարձատրության (22.6%) նվազման տեմպերը դեռևս պահպանվում են, պայմանավորված Ռուսաստանի Դաշնության անբարենապաստ տնտեսական զարգացումներով:⁹⁵

Վերլուծելով ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները, պարզ է դառնում, որ ակտիվների ծավալների ավելացման և կապիտալի խոշորացմանը զուգահեռ, վերջին տարիների առևտրային բանկերը ընդհանուր առմամբ չեն կարողանում ապահովել շահույթի կուտակումներ և տեղի է ունենում չբաշխված շահույթի անկում (տես աղյուսակ 4.): Այսպես, 2017 թվականին, համեմատած 2012 թվականի, հանրապետությունում գործող առևտրային բանկերի ակտիվները ավելացել են շուրջ 1,52 անգամ, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալը՝ 1.63 անգամ, սակայն դրա հետ մեկտեղ, սեփական կապիտալում չբաշխված շահույթը կրճատվել է շուրջ 43 անգամ: Նույնիսկ 2015 և 2016 թվականներին առևտրային բանկերում ոչ թե կուտակված շահույթ, այլ վնաս է ձևավորվել (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

⁹⁴ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, //www.cba.am

⁹⁵ ՀՀ Կենտրոնական բանկի գնաճի հաշվետվություն , //պարբերական, 2017 թ. երրորդ եռամսյակ, էջ 12:

ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները (հազար դրամ)⁹⁶

Հաշվետու ժամանակաշրջան	Ընդհանուր ակտիվներ	Ընդհանուր պարատավորություններ	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	Զբաղիված շահույթ (վնաս)
31.12.2012	2 470 631 226	2 077 042 203	393 589 023	42 821 279
31.01.2013	2 496 524 283	2 098 238 833	398 285 450	(582 427)
31.01.2014	2 835 943 841	2 382 186 526	453 757 315	(271 439)
31.01.2015	3 362 310 103	2 885 637 428	476 672 675	(2 441 591)
29.02.2016	3 472 527 207	2 961 833 821	510 693 386	(3 100 991)
28.02.2017	3 889 581 449	3 247 125 648	642 455 801	989 706

Ձևավորված իրավիճակը վկայում է այն մասին, որ զարգացման ներկա փուլում ՀՀ առևտրային բանկերը ձգտում են ֆինանսական շուկայում մրցակցային դիրքեր գրավել հիմնականում կայուն գործարարություն ապահովելով, և ոչ թե գերշահույթներ հետապնդելով: Բացի այդ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին հաջորդող տարիներին ՀՀ Կենտրոնական բանկը կոշտացրեց իր դիրքորոշումը ֆինանսական համակարգի կայունության ապահովման առումով և առևտրային բանկերը սկսեցին որակապես վերանայել իրենց կապիտալի կազմն ու կառուցվածքը և ձգտել գործառնական ու ֆինանսական ռիսկերի կրճատմանը:

Աղյուսակ 5

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության (մլն դրամ)⁹⁷

Ցուցանիշներ	2012	2013	2014	2015	2016
Վարկային ներդրումներ, այդ թվում	1 527 886	1 658 727	1 994 525	1 939 739	2 280 711
Երկարաժամկետ	1 171 994	1 324 569	1 652 134	1 672 876	1 843 346
ընդհանուրից (%)	76.7	79.9	82.8	86.2	80,8
Կարճաժամկետ	355 892	334 158	342 391	266 863	437 365
ընդհանուրից (%)	23.3	20.1	17.2	13.8	19,2

Վերջին տարիների բանկային շահույթի կրճատման վրա իրենց ազդեցությունը թողեցին նաև վարկային պորտֆելում ընթացող կառուցվածքային տեղաշարժերը: Այսպես, վարկային ներդրումների աճին զուգընթաց, առևտրային բանկերը աստիճանաբար նախապատվությունը տվեցին երկարաժամկետ վարկային ներդրումներին, որոնք վարկային պորտֆելում 2016 թվականին՝ 2011 թվականի նկատմամբ շուրջ 4,79 %-ով աճեցին: Փոխարենը, այդ նույն ժամանակահատվածում համարժեքորեն նվազեց կարճաժամկետ վարկավորման տեսակարար կշիռը (տես աղյուսակ 5.): Արդյունքում, ՀՀ առևտրային բանկերը երկարաժամկետ վարկային ներդրումներ կատարելով, ավելացրին «չաշխատող վարկերի» տեսակարար կշիռը, դրան հետևեց շահույթի հաշվին պարտադիր պահուստների ավելացումը:

ՀՀ առևտրային բանկերում ձևավորված չաշխատող վարկերի (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի), ինչպես նաև դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը տեղաբաշխված ընդհանուր ակտիվների կազմում միայն 2015 թվականի ընթացքում ավելացել է 1,0 տոկոսային կետով և կազմել 7,4%: Ըստ ռիսկայնության դասերի, հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի ու դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 3,3%, 3,2% և 1.9%, իսկ 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ համապատասխանաբար 3,1%, 1.9, % 1.4%: Վարկային պորտֆելի որակի վատացման հետևանք է հանդիսացել նաև նախորդ տարիներին առևտրային բանկերի վարկային պորտֆելի արագատեմպ աճը, իսկ արտարժույթային վարկային պորտֆելի պարագայում՝ նաև 2014 թվականին դրամի կտրուկ արժեզրկման հետևանքով պարտքի բեռի ավելացումը:⁹⁸

⁹⁶ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, //cba.am/am/Site pages/panalyticalmarer.aspx

⁹⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017թ., էջ 405:

⁹⁸ Ֆինանսական կայունության հաշվետվություն, //ՀՀ Կենտրոնական բանկ, 2016 թ., էջ 34

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծական ընդհանուր բնութագրման արդյունքները ցույց են տալիս հետևյալ միտումները:

Առաջին, ֆինանսական միջնորդության մակարդակը ՀՀ-ում արագ աճման միտում ունի, որտեղ առաջատար դիրքերում են գտնվում առևտրային բանկերը, աստիճանաբար ավելացնելով բանկային ակտիվների և վարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում:

Երկրորդ, ՀՀ բանկային համակարգում նկատվում է ֆինանսական միջնորդության կենտրոնացվածության միտում, երբ շեշտադրում է կատարվում առավելապես ոչ թե շահութաբերության բարձրացմանը, այլ կապիտալի խոշորացմանը և որակական կազմի բարելավմանը, նպատակ ունենալով ապահովելու կայուն զարգացում:

Երրորդ, պահպանելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ֆինանսատնտեսական գործունեության նորմատիվները, առևտրային բանկերը ֆինանսական շուկայում փորձում են մրցակցային դիրքերի հասնել՝ հիմնականում շեշտադրում կատարելով ոչ թե շահութաբերության աճին, այլ կապիտալի կառուցվածքային բարեփոխումներին և ակտիվների կառավարման հայեցակարգի փոփոխություններին:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում նկարագրվում է ՀՀ բանկային համակարգի գործունեության ներկայիս առանձնահատկությունները: Մասնավորապես, վերլուծությունների արդյունքում ընդգծվում է, որ ՀՀ-ում գործող առևտրային բանկերը համաշխարհային վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ձգտում են ոչ թե առավելագույն շահույթի ստացմանը, այլ վարկային շուկայում մրցակցային դիրքեր են գրավում կապիտալի որակական կազմի բարելավման հաշվին:

Հիմնաբառեր. վարկավորման աճ, բանկային կապիտալի խոշորացում, վարկային շուկա, առևտրային բանկեր:

ХАРАКТЕРИСТИКИ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ

Нарине Саркисян

В статье описываются текущие особенности банковской системы Армении. В частности, в результате авторского анализа, коммерческие банки, действующие в Республике Армения, ныне стараются не получать максимальную прибыль и достичь высокой уровни рентабельности, что исходит из уроков последнего глобального финансово-экономического кризиса. В месте этого, банки достигают к конкуретным позициям в рынке финансов за счет повышения достаточности капитала и качественных структур овладающих активов.

Ключевые слова: рост кредитования, расширение банковского капитала, кредитный рынок, коммерческие банки.

CHARACTERISTICS OF FINANCIAL AND ECONOMIC ACTIVITY OF THE BANKING SYSTEM OF ARMENIA

Narine Sargsyan

The article describes the current features of the banking system of Armenia. In particular, as a result of the author's analysis, commercial banks operating in the Republic of Armenia are now trying not to get the maximum profit and achieve high levels of profitability, which is based on the lessons of the recent global financial and economic crisis. In the place of this, banks reach competitive positions in the financial market by increasing the capital adequacy and quality structures of the possessing assets.

Keywords: credit growth, expansion of banking capital, credit market, commercial banks.

**ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Սվետլանա Մուրադյան**

Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումը տնտեսագետների ուշադրության կենտրոնում հայտնվեց 19-րդ դարի 30-ական թվականներին, երբ Մեծ դեպրեսիայի ժամանակ պարզ դարձավ, որ պետությունը հարկազանձման և բյուջետային ծախսերի ուղղությունների ճկուն դրսևորումների արդյունքում կարող է մակրոտնտեսական լուրջ կարգավորումների հասնել, մեղմելով գործազրկությունը, ակտիվացնելով տնտեսությունը՝ արդյունաբերական պետական պատվերների, հանրային ծախսերով ծառայությունների գնումների, հարկային տարբերակված դրույքաչափերի շնորհիվ:⁹⁹ Հետագայում, զարգացավ Քեյնսյան տեսությունը, որը ևս մեկ անգամ ընդգծեց պետության կարգավորիչ դերը մակրոտնտեսական միջավայրում:¹⁰⁰

Քեյնսյան տեսությանը հաջորդեց և մինչ մեր օրերը տեսաբանների կողմից իր զարգացումներն են ստանում դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականության մեկնաբանումները, երբ տարբեր գնահատականներ են տրվում պետության կողմից հարկազանձման նպատակադրումներին, ուղղված ոչ միայն հանրային ծախսերի ֆինանսավորման պաշարների ձևավորմանը, այլև հենց պետության, և ոչ թե մասնավոր բիզնեսի կողմից՝ արտադրության ակտիվացմանը և տնտեսական աճի կարգավորմանը:¹⁰¹

Հարկաբյուջետային քաղաքականության նման մոտեցումները իրենց զգալի արդյունքներն են տալիս մակրոտնտեսական հարթությունում, երբ հարկազանձման միտումները փոխկապակցվում են ՀՆԱ-ի աճի, գործազրկության, ինչպես նաև պետական պարտքի կարգավորման գործառնությունների հետ:¹⁰² Սակայն ճյուղային ոլորտում նման ուսումնասիրություններով խնդիրներ առավել խորությամբ չեն դրվում: Փոխարենը, հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումները ավելի շատ մեկնաբանությունների առիթ են ստեղծում ոչ թե “վերևից” (պետության կողմից), այլ “ներքևից”՝ այսինքն ճյուղի գործունեությանը առնչվող շահառուների կողմից:¹⁰³

Նման իրավիճակը հատկապես ակնառու է դրսևորվում լեռնահանքային արդյունաբերության ոլորտում, որտեղ կազմակերպությունները գործարարության ուղղակի և անուղղակի հարկերին զուգահեռ, լրացուցիչ բնապահպանական ու բնօգտագործման հարկեր են վճարում, իսկ հանքավայրերին շրջակա բնակչության շրջանում պետությունից սոցիալ-տնտեսական լրացուցիչ արդյունքային սպասումներ են ձևավորվում: Ուստի հենց այս առումով, ոլորտում վարվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատման հիմքում, մեր կարծիքով, պետք է դրվեն հարկատու լեռնահանքային կազմակերպությունների և համայնքային ազգաբնակչության սպասումները՝ պետության հարկազանձումներից:

Այս առումով, մեր կողմից լեռնահանքային արդյունաբերության ոլորտում վարվող արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգը առաջարկվում է դիտարկել հարկազանձման արդյունավետության և հարկատուների և ազգաբնակչության սոցիալ-տնտեսական սպասումների տեղեկատվական հետադարձ կապի ապահովվածության տեսանկյունից (տես գծապատկեր 1.): Ընդ որում, առաջարկվող հայեցակարգում առանցքային են համարվում ինչպես լեռնահանքային կազմակերպությունների հարկային իրատեսական բեռի սահմանումները, այնպես էլ վճարային հատույցի գնահատումները:


⁹⁹ Арутюнян Т., Направление налоговых реформ и проблемы оценки налоговой нагрузки в РА, //Известия аграрной науки, том 11, #3, 2013, стр. 93-98.

¹⁰⁰ Кейнс Дж., «Общая теория занятости, процента и денег» (1936).

¹⁰¹ Игонина Л.Л. Конкурентоспособность национальной экономики: инновационные императивы и финансовые регуляторы, // Экономический анализ: теория и практика. 2014. № 7. С. 12–20.

¹⁰² Игонина Л.Л. Воздействие фискальной и монетарной политики на развитие экономики и социальной сферы // Финансы и кредит. 2014. № 15. С. 37–45.

¹⁰³ Хеллер П. Фискальное пространство – что это такое и как его получить? // Финансы и развитие. 2009. Июнь. С. 32–33.



Գծապատկեր 1 Հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգի ձևավորման առաջարկվող ուղիները լեռնահանքային արդյունաբերությունում¹⁰⁴

Այս առումով, խնդիր է առաջանում սահմանելու լեռնահանքային կազմակերպությունների գծով հարկային բեռի համընդհանուր ցուցանիշ, որով հնարավորություն կստեղծվեր գնահատելու նաև հարկազանձման արդյունավետությունը: Որպես կանոն, մակրոտնտեսական մակարդակով հարկային բեռի առավել գործածական ցուցանիշ է կիրառվում հավաքագրված հարկեր/ՀՆԱ հարաբերությունը:¹⁰⁵ Ելնելով այս մոտեցումից, առաջարկում ենք հարկատու լեռնահանքային կազմակերպությունների գծով որպես հարկային բեռի համընդհանուր ցուցանիշ առաջարկել պետբյուջե մուծումների ընդհանուր գումար/իրացումից եկամուտ հարաբերակցությունը:

Սակայն կարծում ենք, որ հարկաբյուջետային արդյունավետ քաղաքականության հայեցակարգում միայն հարկային բեռի հաշվարկային արդյունքների մեկնաբանները դեռևս բավարար չեն: Այստեղ կարևորվում է նաև այն հանագամանքը, թե ինչպիս է գնահատվում հարկազանձման արդյունավետությունը: Հարկատու կազմակերպությունները շահախնդիր են պարզելու, թե որքանով է պետությունը աջակցում իրենց կայուն գործունեությանը և զարգացմանը:

Վճարելով հարկեր, կատարելով բնօգտագործման և բնապահպանական մուծումներ, հանքարդյունաբերության կազմակերպությունները իրենց հերթին սպասելիքներն ունեն պետությունից: Ընդ որում, այդ սպասելիքները կարելի է մեկնաբանել գործարարության և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը պետության կողմից աջակցող ծրագրերի տեսանկյունից: Պետությունը պետք է որ շահագրգիռ լինի, և ինչու չէ, նաև հաճախ համաֆինանսավորողի դերով հանդես գա հանքարդյունաբերության ոչ վնասակար և արդիական տեխնոլոգիաների ներդրման գործում, աջակցի կազմակերպություններին մետաղի խտանյութի իրացման գծով միջազգային մարքեթինգի իրականացմանը, կատարի էկոլոգիական վնասների կանխարգելման լայնածավալ աշխատանքներ, որոնք ի գործու չեն իրականացնելու հարկատուները:

Մյուս կողմից, հանքարդյունաբերական կազմակերպություններին տարածքային առումով հարող համայնքային ազգաբնակչությունը նույնպես սոցիալ-տնտեսական գործողություններ ենթադրող սպասելիքներ ունի պետությունից, որոնք վերաբերում են համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը, առողջապահական միջոցառումների իրականացմանը, արտադրական թափոնակույտերի վնասազերծմանը և այլն:

Հետևաբար, եթե գործարարների և ազգաբնակչության սպասելիքների փաստացի իրականացումը ներկայացվի 0-100% սանդղակով, ապա կարող ենք գնահատել լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկազանձման արդյունավետությունը՝ այսինքն հարկային բեռի 1%-ին բաժին ընկնող պետության կողմից հավաքագրված հարկերի վերաբաշխման փաստացի աստիճանը:

¹⁰⁴ Կազմված է հեղինակի կողմից:

¹⁰⁵ Հարությունյան Ս., Բիզնես միջավայրն ու հարկերի վճարման համեմատական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, //Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, #11-12 (161-162), 2013, էջ 44-46:

TE = EG/TB

որտեղ


TE - հարկազանձման վճարային հատույց (%),

EG – պետության կողմից լեռնահանքային արդյունաբերության ոլորտին աջակցման իրականացման փաստացի աստիճան (%),

TB – լեռնահանքային կազմակերպությունների հարկային բեռ:

Այսպես, եթե լեռնահանքային կազմակերպությունները վերլուծվող ժամանակաշրջանում իրացրել են 25 մլրդ դրամի արտադրանք, դրա դիմաց ստանձնելով 2 մլրդ դրամ ուղղակի, անուղղակի հարկերի, բնապահպանական և բնօգտագործման վճարների պարտավորություններ, ապա հարկային բեռը միկրոմակարդակով կներկայացվի 8% ($2/25 \times 100$): Այդ նույն ժամանակահատվածում, եթե լեռնահանքային կազմակերպություններին՝ պետության կողմից ոլորտի զարգացմանը աջակցող տարբեր ուղղությունների ֆինանսավորման սպասելիքները ընդամենը իրականացվել են 72%, ուրեմն հարկազանձման արդյունավետությունը գործարար աշխարհի կողմից կգնահատվի 9% ($72/8$): Իսկ եթե այդ նույն ժամանակահատվածում համայնքի բնակչության կողմից պետությունից սոցիալ-տնտեսական աջակցման սպասելիքները իրականացել են ընդամենը 40%-ով, ապա հարկազանձման վճարային հատույցը արդեն կնվազի և կգնահատվի 5% ($40/8$):

Այսպիսով, լեռնահանքային արդյունաբերության ոլորտում “հարկազանձման արդյունավետություն” առաջարկվող հատույց ցուցանիշը ներկայացնում է հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության աստիճանը, քանի որ այն իր մեջ, մի կողմից ամփոփում է պետության կողմից վարվող ֆիսկալ գործունեության արդյունքները, և մյուս կողմից, ցույց է տալիս հավաքագրված հարկերի վերաբաշխման ոլորտներն ու օգտագործման թիրախային ուղղություններով օգտագործման փաստացի հատույցը:



Գծապատկեր 2. Տեղեկատվական հետադարձ կապի դերը հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումների համատեքստում¹⁰⁶

Ընդ որում, վերոնշյալ տեղեկատվության պահանջը առաջին հերթին սպառում են հանքարդյունաբերության ոլորտի շահառուները (ներդրողները, կազմակերպության կառավարիչները, համայնքի կառավարման մարմինները, ազգաբնակչությունը), որոնց համար արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է ապահովվի հաշվետվողականություն և հետադարձ կապ (տես գծապատկեր 2): Դրանով իսկ, ոլորտում վարվող հարկային քաղաքականության արդյունավետության տեղեկատվական ապահովվածության պահանջը ձևավորվում է “ներքինից”, որով և

¹⁰⁶ Կազմված է հեղինակի կողմից:

հանքարդյունաբերության ոլորտի շահառուները պարբերաբար պետությանը առաջարկներ են ներկայացնում հարկաբյուջետային քաղաքականության բարելավումների ուղղությամբ:

Այս առումով կարևորվում է լեռնահանքային կազմակերպություններում բարելավել ֆինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական համակարգը այնպես, որ ոլորտի շահառուները պարբերաբար տեղեկատվություն ստանան ոչ միայն հարկային պարտավորությունների առաջացման, այլև հարկազանձումից ձևավորված ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման ուղղությունների, չափերի և ստացվող փաստացի հատույցների մասին:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվող լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգային նոր մոտեցումները հնարավորություն կընձեռնեն.

Առաջին. ֆիսկալ գործառնությունների բարելավման առաջարկներ նախաձեռնել “ներքևից”, այսինքն, հարկազանձման ոլորտում ընդգրկված շահառուների կողմից: Այս դեպքում, գործարար ոլորտի, ինչպես նաև համայնքային ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները տիրապետելով հարկերի հավաքագրման և վերաբաշխման հաշվետվողականությանը, կարող են ընդհանրական գնահատականներ տալ ֆիսկալ գործառնությունների ոլորտային արդյունավետության վերաբերյալ:

Երկրորդ, չափելի դարձնել և ցուցիչներով գնահատել լեռնահանքային ոլորտի հարկազանձման հատույցը, որով ոչ միայն տրվում են վարվող հարկաբյուջետային քաղաքականության գնահատականներ, այլև կատարվում են նման գնահատականների համեմատական վերլուծություններ՝ գործարարության շահառուների և համայնքային ազգաբնակչության սոցիալ-տնտեսական սպասումների տեսանկյունից:

Երրորդ, ապահովել տեղեկատվական հետադարձ կապ լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը առնչվող բոլոր շահառուների միջև, դրանով իսկ հարկազանձման, և դրանից բխող հաշվետվողականությունը համարելով հարկաբյուջետային քաղաքականության իրականացման առանցքային սկզբունքներից մեկը:

Ներկայացվող հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հայեցակարգային մոտեցումների կիրառումը, մեր կարծիքով հարկազանձումը լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հնարավորինս կիրագործի հարկերի հիմնական գործառնություններով, հաշվի առնելով ինչպես զանազապետական, այնպես էլ վերահսկողական ու մոտիվացիոն լուծումները:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում ներկայացվում են ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատման նոր մոտեցումներ: Մասնավորապես, առաջարկվում է չափելի դարձնել և ցուցիչներով գնահատել լեռնահանքային ոլորտի հարկազանձման հատույցը, որով ոչ միայն տրվում են վարվող հարկաբյուջետային քաղաքականության գնահատականներ, այլև կատարվում են նման գնահատականների համեմատական վերլուծություններ՝ գործարարության շահառուների և համայնքային ազգաբնակչության սոցիալ-տնտեսական սպասումների տեսանկյունից:

Հիմնաբաներ. լեռնահանքային կազմակերպություններ, հարկեր, հարկազանձման հատույց, հարկային քաղաքականության արդյունավետություն:

ЭФФЕКТИВНОСТЬ НАЛОГОВО БЮДЖЕТНОЙ ПОЛИТИКИ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ АРМЕНИИ

Светлана Мурадян

В статье представлена оценка эффективности бюджетной политики в горнодобывающей промышленности Армении. В частности, предлагается измерить и оценивать налогооблагаемую отдачу горнодобывающего сектора, которая используется не только для оценки налогово-бюджетной политики, но и для сравнительного анализа с точки зрения социально-экономических ожиданий бизнес-бенефициаров и членов сообщества. С этой целью предлагается также интегральный показатель оценки отдачи от налоговых сборов. **Ключевые слова:** горнодобывающие компании, налоги, отдача налоговых сборов, эффективность налоговой политики.

EFFICIENCY OF TAXATION POLICY IN THE MINING INDUSTRY OF ARMENIA

Svetlana Muradyan

The article presents an assessment of the effectiveness of budget policy in the mining industry of Armenia. In particular, it is proposed to measure and assess the taxable returns of the mining sector, which is used not only to assess fiscal policy, but also for comparative analysis in terms of the socio-economic expectations of business beneficiaries and community members. For this purpose, an integral indicator of the assessment of tax returns is also proposed, providing feedback on all the beneficiaries, associated with the development of the mining industry.

Keywords: mining companies, taxes, tax returns, tax policy effectiveness.

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Արմեն Հակոբյան

Տրանսֆերային գնագոյացման կարգավորման հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը հատկապես արդիական դարձավ վերազգային կազմակերպությունների ընդլայնմանը զուգընթաց: Եթե նախորդ դարաշրջանի կեսերին այս հիմնախնդիրները առավելապես գտնվում էին առանձին երկրների հարկային հարաբերությունների դաշտում և կարգավորվում էին ներազգային հարկային օրենսգրքերով, ապա ներկայումս տրանսֆերային գների կարգավորումը տեղափոխվել է միջազգային քննարկումների դաշտ, և դրանով զբաղվում են ՄԱԿ-ը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), Եվրամիության շրջանակում գործող «Տրանսֆերային գնագոյացման կարգավորման» կոմիտեն:

Ինչու՞ տրանսֆերային գնագոյացման կարգավորման հիմնախնդիրը միջազգայնացվեց և տարածվեց բոլոր երկրների վրա: Հարցի պատասխանը մեկն է. մոլորակի վրա մեծ թափ է ստանում անդրազգային տնտեսության սեկտորը, որը չի ճանաչում առանձին երկրների սահմաններ, առանձին ազգերի շահեր և պարզապես թիրախավորվում է առավելագույն շահույթի ձևավորման բարենպաստ միջավայրի ստեղծմանը: Եվ եթե նախկինում, առավելագույն շահույթը հիմնականում ձեռք էր բերվում ինքնարժեքի արդյունավետ կառավարման, մարքեթինգային ճիշտ քաղաքականության վարման, իրացման նոր շուկաների ձեռքբերման արդյունքում, ապա ներկայումս այն հնարավոր է ստանալ սպեկուլյատիվ ճանապարհով՝ կիրառելով տրանսֆերային գներ ֆինանսատնտեսական հոլդինգների, վերազգային կազմակերպությունների ներխուժային գործարքներում, որոնք մասնաճյուղեր և դուստր ձեռնարկություններ ունեն տարբեր երկրներում:

Տեղափոխելով հարկային բազան բարձր հարկային դրույքաչափեր ունեցող երկրներից դեպի նպաստավոր հարկային միջավայրում գործող դուստր ձեռնարկություններ, վերազգային կազմակերպությունները շրջանցում են լուրջ հարկային պարտավորություններ, որն էլ բնականոն հակազդեցության է արժանանում ոչ միայն միջազգային տնտեսական համայնքի, այլև առանձին երկրների կողմից, որոնք որ կորցնում են բյուջե մուտքագրվելիք հարկային եկամուտներ: Արդյունքում անգամ ձևավորվում են հարկային վեճեր տարբեր երկրների միջև, որոնց տարածքներում են գործում վերազգային կազմակերպությունների մասնաճյուղերը:¹⁰⁷

Այս առումով, դեռևս 2013 թվականին ՏՀԶԿ հովանու ներքո իրականացվեցին հանրային քննարկումներ, ուղղված ոչ նյութական ակտիվների գների հարկային վերահսկողության հարցերին (*Revised Discussion Draft on Transfer Pricing Aspects of Intangibles*), ինչպես նաև, տրանսֆերային գնագոյացմանը կարգավորմանը (*White Paper on Transfer Pricing Documentation*), որին արդեն հաջորդեց 2015 թվականի տրանսֆերային գնագոյացման հաշվետվությունը՝ ըստ առանձին երկրների (*Guidance on Transfer Pricing and Country-by-Country*

¹⁰⁷ Fris P., Gonnet S.A. European View on Transfer Pricing after Glaxo. 2006. P.2. , http://www.nera.com/content/dam/nera/publications/archive1/PUB_TPafter_Glaxo_TP1536.pdf

Reporting).¹⁰⁸ Բացի այդ, 2014 թվականին ընդունվեցին նաև ոլորտին առնչվող երկու կարևորագույն փաստաթղթեր, որոնցից առաջինը առնչվում էր շահույթի վերաբաշխման մեթոդի կիրառմանը արժեքի ձևավորման գլոբալ շղթայում (*Discussion draft on the use of profit splits in the context of global value chains*), իսկ երկրորդը մեկնաբանում էր ռիսկերի կանխարգելման մոտեցումները տրանսֆերային գնագոյացման ժամանակ (*Discussion draft on revisions to Chapter I of the Transfer Pricing Guidelines (Including risk, recharacterisation and special measures)*):¹⁰⁹ Կարևորվեցին նաև դրանցից ածանցվող մի շարք փաստաթղթերի ձևակերպումներ, ինչպիսիք էին կապակցված կազմակերպությունների միջև ապրանքահումքային գների կիրառումը (*Discussion draft on the transfer pricing aspects of cross-border commodity transactions*), ծառայությունների արժեքների հավելագրումները (*Discussion Draft of the Proposed Modifications to Chapter VII of the Transfer Pricing Guidelines Relating to Low Value-Adding Intra-Group Services*), ինչպես նաև՝ զարգացող երկրների կտրվածքով տրանսֆերային գների համադրումը (*Paper on Transfer Pricing Comparability Data and Developing Countries*):


Ընդհանուր առմամբ, տրանսֆերային գնագոյացման արդի փուլում միջազգային մակարդակով առավելապես թիրախավորվում են հետևյալ ուղղությունները:

Առաջին. մեկնաբանելով ներխմբային գործարքների բնույթը, իրականացվում է վաճառքի արժեքային շխթայի վերլուծություն՝ բացահայտելու համար տրանսֆերային գնագոյացման ռիսկերը վաճառահանման յուրաքանչյուր փուլում:

Երկրորդ. առաջարկվում է ծախսերի շահութաբերության «անվտանգության բարձիկ», նվազագույնը 5% շեմով, որը կանխարգելիչ դեր պիտի խաղա տրանսֆերային գների ռիսկերի կանխարգելման հարցում:

Երրորդ. համանման գործարքների գների համադրման դաշտի ձևավորումը առաջարկվում է իրականացնել, հաշվի առնելով նաև բորսայական միջազգային գները ներխմբային գործարքների իրականացման պահին:

Աշխարհի շուրջ 180 երկրներում գործող վերագրային կազմակերպությունների շրջանում իրականացված հարցում-հետազոտությունները վկայում են, որ դեռևս հարցվողների 65%-ն կարողանում կազմել ներխմբային տրանսֆերային գների կիրառման այնպիսի համաձայնագրեր, որոնք որ կբավարարեն փաստաթղթի թափանցիկության և իրատեսության գծով սահմանված միջազգային պահանջները, իսկ մնացած 35%-ին չի հաջողվում ներկայացնել տրանսֆերային գներով այնպիսի պայմանագրեր, որոնք միանշանակ ընդունելի կլինեն հարկային մարմինների կողմից (տես գծապատկեր 1):




¹⁰⁸ UN transfer pricing guidance for developing countries could increase burdens on multinationals,

<http://www.pwc.com/us/en/washington-national-tax/newsletters/wnts/un-transfer-pricing-guidance-developing-countries.html>

¹⁰⁹ OECD consults on transfer pricing matters. <http://www.oecd.org/ctp/transfer-pricing/oecd-consults-on-transfer-pricing-matters.htm>

Գծապատկեր 1 BEPS համաձայնագրի շրջանակում գործող երկրներում տրանսֆերային գնագոյացման ներխուժային պայմանագրային գործընթացի շուրջ իրականացված հարցումների արդյունքները:¹¹⁰

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ ոչ բոլոր վերագրային կազմակերպություններն են հեշտությամբ կիրառում տրանսֆերային գնագոյացման կարգավորման ներկայիս միջազգային մոտեցումները, որոնք ընդունված են ՄԱԿ-ի կողմից:¹¹¹ Այսպես, հարցման ենթակա կազմակերպությունների շուրջ 17%-ը ընդհանրապես հիասթափված է տրանսֆերային գնագոյացման միջազգային կարգավորման գործիքակազմի կիրառումից և չի կարողանում գործնականում այն կյանքի կոչել, 44%-ը դժվարությամբ՝ բայց փորձում է կիրառել դրանք, և միայն 39%-ն է, որ յուրացրել է այդ գործիքակազմը և պատրաստակամ է այն կիրառել հետագայում (տես գծապատկեր 2):



Գծապատկեր 2 BEPS համաձայնագրի շրջանակում գործող երկրներում տրանսֆերային գնագոյացման գործիքակազմի կիրառմանը առնչվող հարցումների արդյունքները:¹¹²

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տրանսֆերային գնագոյացման հարկային վերահսկողությունը ներկայումս դուրս է եկել ազգային նեղ շրջանակների շահերից և քննարկման առարկա է դարձել միջազգային հարթակում: Մասնավորապես, ներկայումս, տարբեր երկրներում գործող հարկային փոխհամագործակցության ներդաշնակեցման խնդիր է դրվում, ձևավորելով տրանսֆերային գներով իրականացվող գործարքների հարկային հաշվետվության թափանցիկության և համախմբման տեղեկատվական դաշտ:¹¹³

Հիմնաքառեր. տրանսֆերային գներ, հարկազանձում, գնագոյացման հարկային վերահսկողություն, կապակցված բիզնես միավորներ:

MODERN PROBLEMS OF SETTLEMENT TRANSFER PRICES

Armen Hakobyan

Control over taxation of transfer prices is currently based not only on the interests of national

¹¹⁰ 2016 Transfer Pricing Survey Series: In the spotlight A new era of transparency and risk

¹¹¹ Տրանսֆերային գնագոյացման ուղեցույց՝ զարգացող երկրների համար, ՄԱԿ, 2017 թվ.

¹¹² 2016 Transfer Pricing Survey Series: In the spotlight. A new era of transparency and risk

¹¹³ OECD Secretary-General Report to G20 Finance Ministers, Shanghai, People's Republic of China, 26-27 February 2016, <http://www.oecd.org/g20/topics/taxation/oecd-secretary-general-tax-report-g20-finance-ministers-february-2016.PDF>

narrow circles and is becoming a subject of discussion in the international arena. In particular, there is a need to harmonize tax cooperation in different countries, formulate transparency and consolidate the information area of tax reporting operations at transfer prices. The article analyzes the current directions of transfer pricing regulation in the global economy.

Keywords: transfer prices, taxation, tax audits, related business units.

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ УРЕГУЛИРОВАНИЯ ТРАНСФЕРТНЫХ ЦЕН

Армен Акопян

Контроль над налогообложением трансфертных цен в настоящее время исходит из интересов национальных узких кругов и становится предметом обсуждения на международной арене. В частности, существует необходимость в гармонизации налогового сотрудничества в разных странах, формулировании прозрачности и консолидации информационной области операций налоговой отчетности по трансфертным ценам. В статье анализируются нынешние направления регулирования трансферного ценообразования в глобальной экономике.

Ключевые слова: трансфертные цены, налогообложение, налоговые проверки, связанные бизнес-единицы.

Հոբելյանական տարվան ընդառաջ

Հարգելի՛ ընթերցող, ներկայացնում ենք Հյուսիսային համալսարանի կողմից 2019 թվականին Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված առանցքային միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը
Համալսարանի մեծ դահլիճում հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին (անցկացվում է առանձին ծրագրով)	2019 թ. փետրվարի երկրորդ տասնօրյակ
Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստ՝ համալսարանի Ալավերդու բաժանմունքում	2019 թ. փետրվարի երկրորդ տասնօրյակ
«Հովհաննես Թումանյանի հոգևոր ժառանգությունը և արդիականությունը» խորագրով միջբուհական գիտաժողով՝ նվիրված մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակին (անցկացվում է առանձին ծրագրով)	2019 թ. փետրվարի երկրորդ տասնօրյակ
Նախապատրաստել և անցկացնել ուսանողական գիտաժողով՝ նվիրված Թումանյանի ծննդյան 150-ամյակին	2019 թ. մարտի երկրորդ տասնօրյակ
Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների պատվիրակության այցելություն Թբիլիսի՝ Թումանյանի գերեզմանին, հոգեհանգստի արարողություն	19 փետրվարի 2019 թ.
Համալսարանի դասախոսների և ուսանողների պատվիրակության այցելություն Թումանյանի ծննդավայր Դսեղ	2019 թ. ապրիլ
Դպրոցականների շարադրությունների մրցույթ «Ամենայն հայոց բանաստեղծը» թեմայով	2019 թ. ապրիլ
Երևանում և Ալավերդում թումանյանական աշխարհի բնապատկերների ցուցահանդես	2019 թ. մայիս-հունիս
Գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես՝ «Թումանյանի ստեղծագործությունները կտավի վրա» թեմայով	2019թ. ապրիլ, մայիս, հունիս
Դսեղում, Թումանյանի տան բակում համալսարանի Ալավերդու բաժանմունքի 2018-2019 ուստարվա շրջանավարտներին դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն՝ նվիրված Թումանյանի ծննդյան 150-ամյակին:	2019 թ. հունիսի երկրորդ տասնօրյակ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսափայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
 - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
 - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

*Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը*

Գլխավոր խմբագիր՝ Ճուղուրյան Ա.Գ. (տնտ. գիտ. դոկ.)
Խմբագրական խորհուրդ

Մակիջյան Բ.Մ. (մանկ. գիտ. թեկ.), Ալավերդյան Ա.Ս. (բան. գիտ. թեկ.), Ասատրյան Գ.Ե. (փիլ.
գիտ. դոկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. դոկ.), Երիցյան Ս.Ս. (բան. գիտ. դոկ.), Խեչոյան Ա.Ա.
(իրավ. գիտ. թեկ.), Մարգարյան Հ.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Ներսիսյան Ա.Ա. (պատմ. գիտ. դոկ.),
Սարգսյան Ս.Թ. (պատմ. գիտ. դոկ.)

Հյուսիսափայլ. գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա.Գ. Ճուղուրյան և ուրիշ.։
Գլխ. խմբ.՝ Ա.Գ. Ճուղուրյան,- Եր.։ «Հյուսիսային համալսարան» հրատ., 2018, 104 էջ։

© «Հյուսիսային համալսարան հրատարակչություն», 2018 թ.

**СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ
NORTHERN UNIVERSITY**

ЮСИСАПАЙЛ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
ЕЖЕГОДНИК
2018

Главный редактор Джугурян А.Г. (доктор экон. наук)

Редакционная коллегия

Макичян Б.М. (канд. пед. наук), Аветисян С.С. (доктор экон. наук), Алавердян А.С. (канд. филол. наук), Асатрян Г.Е. (доктор филос. наук), Ерицян С. С. (доктор филол. наук), Марзпаян А.А. (доктор экон. наук), Нерсисян А.А. (доктор ист. наук), Саргсян С.Т. (доктор ист. наук), Хечоян А.А (канд. юр. наук)

HYUSISAPAYL

Collected Scientific Articles
YEARBOOK
2018

Editor-in-chief: Tshuguryan A.G. (doctor of econ. science)

Editorial Collegium

Makichyan B.M. (PhD in Pedagogical), Alaverdyan A.S. (PHD of Philology), Asatryan G.E. (Doctor of Science in Philosophy), Avetisyan S.S. (Doctor of Science in Economy), Eritsyan S.S. (Doctor of Science Philology), Khechoyan A.A. (PHD of Law), Nersisyan A.A. (Doctor of Science in History), Marzpanyan A.A. (Doctor of Science in Economy), Sargsyan S.T. (Doctor of Science in History)

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԱՐԵԳԻՐՔ
2018

ЮСИСАПАЙЛ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
ЕЖЕГОДНИК
2018

HYUSISAPAYL

Collected Scientific Articles
YEARBOOK
2018

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորումը՝ Ի. Մարուխյան

*Տարեգրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է Հյուսիսային համալսարանի
[www//northern.am](http://www/northern.am) պաշտոնական կայքում:*

Չափսը՝ 60x84 ¹/16

Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.

Տպաքանակ՝ 120

Տպագրված է՝ Ա/Ձ «Արսեն Ժամհարյան» տպարանում
Երևան-25, Ալեք Մանուկյան 128